№ 210 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, édition «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

№ 210 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28

Սօֆիայ Յովսէփեանցը, Սաթէնիկ և Խաչատուր Ադամեանցները, Աղէքսանդր Բաղդասարեանցը իր որդիներով՝ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և բարեկամներին, առաջինն ամուսնու, երկրորդները հօր, վերջինները փեսայի

ՄԻՔԱՅԷԼ-ԽԱՆ ՅՈՎՍԷՓԵԱՆՑԻ

մահը, որը տեղի ունեցաւ սեպտեմբերի 27-ին։ Հոգեհանգիստը ամեն օր, երեկոյեան ժամը 6-ին։ Թաղման մասին առանձին կը յայտարարվի։

Բացված է քաժանորդագրութիւն

„ԵՐԿՐԻ ԶԱՅՆԸ“

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որը լոյս կը տեսնէ հոկտեմբերի 7-ից։

«Երկրի Զայնը» զբաղվելու է մասնաւորապէս Թիւրքահայ կեանքով և Թիւրքահայկական հարցով։ Նա ձգտելու է ստեղծել հայ-Թիւրքական համերաշխութիւն։

Տարեկան բաժանորդագինն է. Թիֆլիսում 3 ր. 50 կ., գաւառներում 4 ր., արտասահմանում 12 ֆրանկ։

Հոկտեմբերի 1-ից մինչև տարվայ վերջը 1 ռուբլի։

Բաժանորդագրվելու համար դիմել՝ Тифлисъ, редакція «Еркри Дзайнъ», Грибоѣдовская № 16, д. Зубалова, կամ Tiflis, rédaction de l'«Erkri Dzaïn», Griboedovskaya, № 16, կամ «Գուտենբերգ» գրավաճառանոցին։

առ. 3—5

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ՄԱԹԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի բաժանորդագրութիւնը։

Տարեկան գինն է Թիֆլիսում	4 ր.		Ուրիշ տեղեր՝	5 ր.։	
Կէս տարվայ » »	2 ր.		» »	2 ր. 50 կ.։	
3 ամսվայ » » »	1 ր.		» »	1 ր. 25 կ.։	
1 ամսվայ » » »	— 40 կ.		» »	— 50 կ.։	

Մենք ընդունում ենք և զանազան յայտարարութիւններ ամեն լեզուներով։ Վաճառվում է գաւառական բոլոր հայաշատ քաղաքներում։

Լոյս տեսաւ «Մաթաղայի» № 1-ի երկրորդ տպագրութեամբ։ Շաբաթ, սեպտեմբերի 30-ին, լոյս կը տեսնի № 16.

Խմբագիր-հրատարակող՝ Ատ. Երիցեան

(հ. շ.) առ. 1—2

Отъ редакціи газеты „Тифлисскій Листокъ“

По распоряженію Временнаго Тифлисскаго Воен. Ген.-Губернатора

газета „Тифлисскій Листокъ“

пріостановлена.

По состоявшемуся соглашенію между редак. закрытой газеты и редак. газеты

„Тифлисскій Телеграфъ“

въ цѣляхъ удовлетворенія городскихъ и иногородныхъ подписчиковъ нашихъ, послѣдніе будутъ получать газ.

„Тифлисскій Телеграфъ“.

ՆԱԻԹԱՑԻՆ ՊԱՀԵՍՏ

ՏԻՐԱՆ

Բաղու Տօրգովայա փողոց տ. Մայիլեանի, հեռախօս № 826։

Մատչելի գներով առաջարկում է նաւթ, բենզին, իւղ, մազութ, կուղրօն, սմալայ և ուրիշ ամեն տեսակ նաւթային ապրանքներ, վագոնով և տակառով. օտար տեղերի պատուէրները կատարվում են ճշտութեամբ և արագ։

«ՏԻՐԱՆ»-ի գրասենեակն ընդունում է նաև կոմիսիոներական յանձնարարութիւններ։

Հեռագիրների և նամակների հասցէն՝ Բաղու «ՏԻՐԱՆ».

10—10 (ե.հ.կ.) Ցարգանօք Տիգրան Յով. Միքայէլեան

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՇԽԱՏԱՆՔ“

Նաբաթաթերի

Բաժանորդագրութիւն

Տարեկան . . .	4 ր.
Կէս տարին . . .	2 ր.

Սեպտեմբերից մինչև տարվայ վերջը 1—50 կ.

Խմբագիր-հրատ. Ա. Աթանասեան

առ. (ե. հ.) 2—6

ԿԱՆՉՆՈՒ ԿԼԻՆԻԿԱՅԻ

պրոֆ. Սնեզիրեվի նախկին օրդինատոր

ԲԺՇԿԱԳԵՏ

Դ. Ն. ԱԹԱԲԷԳԵԱՆ

Ընդունում է կանայք և մանկաբարձական հիւանդութիւն ունեցողներին Մոսկվայում։ Խորհրդակցութիւնը պրոֆէսորների մասնակցութեամբ։ Հասցէն՝ Тверская, Козицкій пер., д. Бахрушина, кв. 230.

առ. 2—10

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ և

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

Ընտանիքներում

Ա. Մ. ԵՂԵԿԵԱՆ

Հասցէն բանակցութեան համար՝ Ул. Петра Великаго (бывш. Лабораторная) № 21,

առ. 17—20

ՄԱՐԵԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ

օրիորդաց դպրոցի հոգաբարձական խորհուրդը

յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ դպրոցի բացումը նշանակված է առաջիկայ Երկուշաբթի, հոկտեմբերի 2-ին։

առ. (հ. շ.) 1—2

Մայրերի և դաստիարակչուհիների համար բացված են մանկական պարտէզների

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Մի քայլեան փողոց № 138,

Պարապմունքների սկիզբն է հոկտեմբերի 3-ին։ Խոնարհաբար խնդրում են ապրազբրվողներին վճարել առաջին կիսամեակի վճարը մինչև պարապմունքների սկսվելը։ Վարժուհիները վճարում են ամսականով, սկզբից։

առ. 1—1

Ա. ՄԵԼԻՔ-ԱԼԱՎԵՐԴԵԱՆ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ և ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ

արարկանների դասեր։

առ. Межевая, 2. 8—20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմորումներ. Վերջին տեղեկութիւններ. Ժողովրդական ազատութեան կուսակցութեան համագումարը Հէյսինգֆօրսում. Կուսակցութիւնների շուրջը. Կառավարական փաստեր և լուրեր. Բողոքներ. Հայոց հարցը. Ազգագրական ընկերութեան նիստը. Պարսկաստանի սահմանադրութեան մասին. Մարդասպանութիւնը Ղզլարում. Հարցաքննութիւնները շվեցարական զորոցներում. Ճեմարանի կեանքից. Ցեղ չը կայ. Իմ երկրորդ պատասխանը. Բազուի խլրտումներից. Հարցը պարզված է. Բաց նամակ հայ հասարակութեան. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր — ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԽՄՈՐՈՒՄՆԵՐ

VI

Այն ժամանակ, երբ հայերը, մակեդոնացիները, արաբները, յոյները, դրուզները բարձրաձայն պահանջում են իրանց կեանքի բարելաւում, բուն Թիւրքը տարբը շատ քիչ պահանջներ է առաջադրում կառավարութեան, և շատ Թոյլ բողոքներ է արտադրում ընդհանրապէս։

Այս վերջին տարիներում մի քանի տեղ արձանագրվեցին Թիւրքական խլրտումների դէպքեր, բայց դրանք շատ երկչոտ և մակերեսային բնաւորութիւն էին կրում։ Երզրումի, Կաստամունիի և մի քանի ուրիշ տեղերի խլրտումները շուտով խաղաղվեցին, Թիւրքմացութիւնները հարթվեցին և օսմանեան կառավարութեան աջողվեց լռեցնել բողոքի ձայները։

Թիւրք տարբը նոյնպէս ճնշված և թրշուառ վիճակի մէջ է, ինչպէս և միւս հպատակները, սակայն այդ տարբը շատ շուտ հրապուրվում է իր մի քանի արտօնութիւններով և մասնաւոր ազդեցութիւններով, շատ շուտ սիրաշահվում է ազգակից մեծաւորներից և աւելի հեշտ կերպով գործիք է դառնում օսմանեան ազդասիրութեան խարդաւանանքներին և դաւերին։

VII

Իսկ երիտասարդ Թիւրքերը։

Այո, կան երիտասարդ Թիւրքերի խմբակներ ոչ միայն մայրաքաղաքում, այլ նոյնիսկ կան բազմաթիւ փոքր ի շատէ կրթված անձեր, որոնք ներկայումս բողոքողների դեր չեն ստանձնում իրանց վրա, բայց լաւ գիտում են ներկայի ողբերգական վիճակը և որոնք գիտեն, որ օսմանեան պետութիւնը կարօտ է հիմնական բարեփոխութիւնների։

Կան, այո, կան թարմ հոսանքների կարօտ այդ անմահները, սակայն նրանց հետ միասին աւելի մեծ քանակութեամբ և աւելի մեծ ազդեցութեամբ գործում են վարչական կամարիլլայի լէգէոնները, որոնք կաշկանդել են ժողովրդական կեանքի բոլոր արտայայտութիւնները և ստեղծել են մի այնպիսի դժոխք, որ յուսահատութիւն է ներշնչել բոլոր այն խմբերին, որոնք կարող էին աւելի նրբապատաւոր հանգամանքներում որոշ կուլտուրական դեր կատարել իրանց երկրում։

Այդ է պատճառը, որ Թիւրք տարբը ընդհանուր առմամբ բողոքողի բնաւորութիւն համարեա չունի պետութեան մէջ։

VIII

Արաբների մէջ սկված յուզմունքները ոչ միայն չեն դադարում և թուլանում, այլ տարէցտարի աւելի ընդարձակվում են և բարդանում։

Այն մաւոր կուլտուրական շարժումը, որ սկսվել է Եգիպտոսի արաբների մէջ այն շփումները, որ ունեն արաբները Միջերկրականի և Կարմիր ծովերի ափերում եւրօպացիների հետ, արթնացրել են արաբ ազգի գիտակից ոյժերը։ Արաբը այլևս չէ զգում ստրկի դերում մընալ։ Նա սկսում է վերայիշել իր դերը Հարուն-ալ-Բաշիդի օրերում ու արաբական քաղաքակրթութեան ծաղկած ժամանակ և ուզում է ներկայանալ իբրև ինքնուրոյն գործող մի ազգ, անկախ Օսմանեան կառավարութիւնից։

Արաբները արդէն ունեն իրանց քաղաքական գործողների ուժեղ խմբերը, որոնք վճռել են ոչ մի արգելքի առաջ կանգ չառնել և շարունակել իրանց ազգային վերածնութեան և ինքնօրինութեան գործը։

Երբ տասը-տասնհինգ տարի սրանից առաջ բռնկվեցին արաբական առաջին յուզմունքները, Թիւրքիայի կառավարութիւնը նայեց նրանց վրա, իբրև տեղական անկարգութիւնների և շփոթի վրա, բայց այժմ պարզվում է, որ արաբական շարժումները օրէցօր ստանում են աւելի ու աւելի լուրջ նշանակութիւն։

IX

Մենք առանձնապէս կանգ չենք առնում մակեդոնական և յունական շարժումների վրա, որովհետև վաղուց է, որ նրանք ստացել են որոշ կերպարանք և Եւրօպան նոյնիսկ արել է մի քանի քայլեր յատուկ զբաղվելու նրանց գործով։

Մակեդոնիայի լեռներում և տափարակներում շարունակվում է այն զոռ և վտանգաւոր պայքարը, որ Բերլինի վեհաժողովից յետոյ այնտեղ ժղվում է երբեմն լուռ ու հանդարտ, իսկ երբեմն ահեղ թափով և սարսափելի ոյժով։

Պետութիւնները փորձեցին բարեփոխութիւններ մտցնել, բայց որովհետև նրանք ստիպված են զգում իրանց ամենքան անել առաջի Թիւրքական պաշտօնեաների միջոցով և նրանց անմիջական մասնակցութեամբ, ուստի մինչև այժմ չեն կարողացել այնպիսի մի բարեկարգ վիճակ ստեղծել, որ երկրի ազգաբնակութիւնը խաղաղվի և հանգիստ, հանդարտ անձնատուր լինի իր առօրեայ կեանքին և կուլտուրական զարգացման գործին։ Յուզմունքները շարունակվում են։

X

Իսկ հայերը։

Սարսափելի արհաւիրքները, որոնք Թափվեցին հայերի գլխին, գազանային կոտորածները և յոչոչումները, որոնցով դերեղման իշեցրին տասնեակ հազար հոգիներ, անգութ հալածանքները, աւերումները, Թալանները, հրդեհները, որոնցով քարուքանդ արին գիւղեր և ամբողջ գաւառներ, ոչնչացրին հայ ազգի գաւակներից շատերին, գտարկեցին երկրի ամբողջ տարածութիւններ, բայց և այնպէս չը լուծված հարցը մնաց իր նախկին սպառնական վիճակի մէջ։

Հայ տարբը այժմ էլ, ինչպէս և տարիներ առաջ, սպասում է իր դատի պաշտպանութեան։ Նա ուզում է ապրել մարդավարի, իբրև կուլտուրական մի ազգ. և նա այսօր էլ սպասում է ազատվելու այն սարսափելի ծանր վիճակից, այն դժոխքից, որի մէջ նա ապրում է։

Թիւրքիան չուզեց հարցը լուծել և փորձեց նրան ջնջել իր սեփական եղանակով, բայց նա չը ջնջվեց։ Հարցը դարձեալ սպասում է իր լուծման։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակից սեպտեմբերի 26-ին մեզ գրում են։ «Հոկտեմբերի 1-ին մեզ գրում են. «Հոկտեմբերի 1-ին մեզ գրում են. Բանից գիւղի ընակիչ Սարգիս Դաբաղոնեանցին և վիրաւորել են մի անյայտ չօվդարցու։ Անցեալ շաբաթ Թուրքերը սպանել են բանանցի Արսէմ Ա. Թանասեանցին։ Մեր գաւառի 2-րդ թաղամասում կատաղաբար շրջում է Ռոյուն Անվերդի օղլու աւազակախումբը, որը, ապրելով Այրումի գիւղերում, Բաղմանալարից ստանում է հրամաններ, ցուցմունքներ և զէնքեր։ Այդ աւազակախումբը, ինչպէս պատմում են, լաւ յայտնի է գաւառական ադմինիստրացիային, բայց ինչու նա չի դիմում լուրջ միջոցների, Աստուած գիտէ»։

Ս. Սարդարեան

—

Շիրակ, Գեղաուկ-սաթլմիշ գիւղ, 24 սեպ.

Ալաշկերտի Թիւրքական սահմանից վերջերս բաւական քանակութեամբ անցել են մեր կողմերում ջանբազար անուն կրող Թուրք և քիւրդ երիտասարդներ, որոնց մէջ գտնվում են աչքի ընկնող մօլլաներ և փախիներ, որոնք ամենաեռանդուն կերպով պրօպագանդա են ժղում Թուրք և քիւրդ ազգաբնակութեան մէջ դնվել, անյապաղ կազմակերպել ու դուրս գալ ապարէզ և կռիւ մղել հայերի դէմ։ Տեղիս ազգաբնակութիւնը երկար ու ձիգ տարիներ խաղաղ և հաներաշխ, եղբայրաբար ապրելով միասին չէ կամենում այդ անմիտ գործողութիւնը կատարել, սէրը, եղբայրութիւնը խզել։ Այնուամենայնիւ, շատերին չէ պաշտպանում խոյս տալ այդպիսի անմիտ պարմունքից։

Վերջապէս կոյր ամբոխը համոզվելով արիւնարբու գազանների հետ, կատարում են իրանց ոճրագործութիւնները, թալանելով խաղաղ ազգաբնակութեան։

Ջանբազար խումբը իր պրօպագանդիստներով շարունակ շրջում է Թուրք գիւղերը կազմակերպելու, սակայն այն գիւղը, որ չէ լսում արիւնարբու գիւաղին խմբին, նրանք սպառնում են այդ գիւղին աւերել և թալանել։

Շատ անգամ անցել են լեռնային մասի գիւղերը, կատարել են իրանց հրէշութիւնը, թալանել ու փախցրել են գիւղի հօտը և նախիրը ու անցել են նորից Թիւրքաց սահմանը։

Ցիշեալ խումբը սեպտեմբերի 23-ին գալիս է Մաշքիալի գիւղը կազմակերպելու, Ջանբազար խումբ պատրաստելու։ Գիւղի մի մասը չէ համաձայնվում. զիշերվայ ժամը 12-ին սկսվում է սասալի հրացանաձգութիւն, գիւղը համարեա աւերածվում է։ Սակայն Ջանբազարցիներին չէ աջողվում փախցնել 15 հատ ոչխար և անվտանգ անցնում են։

Սիրական Տէր-Սահակեանց

Ց. Գ. Նամակ դեռ չը կնքած ինձ մօտ եկաւ Քիւրակդարա գիւղի Առաքել Փիլոսեանցը և պատմեց հետեւեալ դէպքը։ Սեպտեմբերի 23-ի գիշերը ժամը ուղիղ 12-ին Թուրքերը յարձակվում են նրանց շարունակվում։ Պարզվում է, ինչ դարայ Թուրք գիւղի հօտի վրա, տասնում են 600 ոչխար։ Հովիւները լուր բերելով գիւղը, ընկնում են ետեից, բայց իզուր, չեն կարողանում հետը դառնալ։ Դարանում հետը գրաւեցան։ Դարանագութիւն եղել է Ինջադարայ գիւղի կողերից, հետը գրաւելու համար, բայց չէ յաջողվում։ Ջանբազարցիները առանց պատասխանելու ոչխարները հասցնում են Քինակ Թուրք գիւղը։ Ոչխարների տէրերը երբ հասնում են Քինակ գիւղը, քինակեցիք գինված դուրս են գալիս նրանց դէմ և չեն թողնում գիւղը մտնելու, սակայն ինջադարեցիք խնդրեցին Քուրակդարի երիտասարդներից 7 հոգու և գնացին օգնութեան։ Մանրամասը կը գրեմ հետեւեալ անգամ։

Սիրական

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՀԷՅՍԻՆԳՖՕՐՍՈՒՄ

Հէյսինգֆօրս, 25 սեպտեմբերի։ (Շարունակութիւնը)։ Նաբոկովը կարդում է կուսակցութեան՝ Դումայում բռնելիք տակտիկայի վերաբերմամբ կազմած զեկուցումը։ Ֆրակցիան սկզբունքով ընդունեց երրորդ համագումարի առած ուղղութիւնը։ գործնականապէս հարկ եղաւ համակերպվել աշխատաւոր խմբակի գործունէութեան հետ, խմբակի որ երկրորդ է իր թիւով և մաւորութեամբ, բայց ձեռք է բերել խոշոր ժողովրդականութիւն. մինչարութեան հետ բացարձակ կռիւը օրէցօր սուր կերպարանք ստանալով անպատճառաւորում էր. այդ կռուում Դումայի յենվեց համարեա բացառապէս իրան վրա, գնահատելով իր սեփական ոյժը. վերագնահատման մէջ է կայանում պատճառը և պարտութիւնը։ Սակայն, անպտղութեան պատճառները չը պէտք է փնտռել Դումայի տակտիկական սխալանքների մէջ, անկասկած կատարված են մի շարք սխալանքներ. ֆրակցիան հնարաւորութիւն տուեց աշխատաւոր խմբակին արծարծել հարցերը բէք հակառակորդ է զգաստ ընդդիմադրութեամբ այն ճառերին, որոնք որ նիստի դահլիճը քաղաքական միտինգի էին վերածել։ Նաբոկովից յետոյ, Գրէչէսկուլը զեկուցում է կուսակցութեան՝ Պետական Դումայի արձակումից յետոյ տեղի ունեցած տակտիկայի մասին. զեկուցումը տևում է մի ժամից աւել։ Երեկոյեան նիստում Միլիւկովը կուսակցութեան տակտիկայի զեկուցման մէջ մատնանշում է, որ ներկայացուցչութեան պաշտպանութեան մեթոդը վիրաբուժեան կոչով հակամէտ է յեղափոխականին և կայանում է ոչ ակտիւ գործողութիւնների մէջ։

Կոչի մի քանի որոշումները կուսակցութեան մէջ — ընդհանուր զգրունքային ընդունելութեամբ հանդերձ — առաջ բերին բազմաթիւ և զանազան տարբերութիւններ. երկու ամսից յետոյ շատ բան փոխվեց. պէտք է վերաքննել բարձի թողած իդէան. անկարելի է վարքագրկանել պասիւ ընդդիմադրութեան իդէան, ինչպէս թեթևամտութեամբ առանարկված են գործադուլները։ Պէտք է պատրաստվել ընտրութիւններին. պասիւ ընդդիմադրութեան գործնական կազմակերպութիւնը, անհամապատասխան է գործունեայ պատրաստութեան հետ մասնակցելու ընտրութիւններին (այստեղ հեռագիրը ընդհատվում է պահանջված է կրկնողութիւն) շաբաթը պատրաստվում են թողնել համագումարը վաղը, հէնց որ կը պարզվի կուսակցութեան վերաբերմունքը դէպի վիրաբուժեան կոչը։ Պետական ծառայութեան մէջ եղող անձնաւորութիւնների վրա մեծ տպաւորութիւն է գործել այն հրահանգը, որ արգելում է մասնացել հակա-կառավարչական կուսակցութիւններին։ Մեծամասնութիւնը ճնշող տպաւորութեան մէջ է, և ուզում է մի կերպ դուրս եկել վիրաբուժեան կոչի անայրմար դրութիւնից։

(Հեռ. Գործ.)

—

Ուղղումն։ Երեկոյ, Հէյսինգֆօրսից — սանտ.-ռամկավար կուսակցութեան համագումարի նիստի մասին խփած հեռագրի մէջ բաց էին թողված հետեւեալ խօսքերը. «Միլիւկովից յետոյ, տաք և խստուն վիճաբանութիւններ են սկսվում պասիվ ընդդիմադրութեան վերաբերեալ. որոշվում են երկու հոսանք. կենտրոնական կոմիտէի մեծամասնութիւնը, Միլիւկով, Գուլգորուկով, Հեսսէն, Սորուվէ, Բոտիչէվ լիտերները կողմնակից են կոմիտէի բեռոլիւցիային. հակառակ են առաւելապէս գաւառական պատուիրակները։ Բէռոլիւցիայի մերժումը ներկայ կազմի կենտրոնական կոմիտէի լիակատար կազմալուծման պատճառ կը լինի։

(Հեռ. Գործ.)

—

Հէյսինգֆօրս, 26 սեպտեմբերի։ Անա երրորդ օրն է, որ բեռոլիւցիայի նախագծի քննութեան վիճաբանութիւնները շարունակվում են։ Պարզվում է, որ ազգաբնակութիւնը իրանց տեղերում ինչդարայ Թուրք գիւղի հօտի վրա, տանում են 600 ոչխար։ Հովիւները լուր բերելով գիւղը, ընկնում են ետեից, բայց իզուր, չեն կարողանում հետը դառնալ։ Դարանում հետը գրաւեցան։ Դարանագութիւն եղել է Ինջադարայ գիւղի կողերից, հետը գրաւելու համար, բայց չէ յաջողվում։ Ջանբազարցիները առանց պատասխանելու ոչխարները հասցնում են Քինակ Թուրք գիւղը։ Ոչխարների տէրերը երբ հասնում են Քինակ գիւղը, քինակեցիք զինված դուրս են գալիս նրանց դէմ և չեն թողնում գիւղը մտնելու, սակայն ինջադարեցիք խնդրեցին Քուրակդարի երիտասարդներից 7 հոգու և գնացին օգնութեան։ Մանրամասը կը գրեմ հետեւեալ անգամ։

Սիրական

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—Լուր է պատում, որ Ֆինլանդիայի գենեռալ-նահանգապետ Հերարդը միմիսարարմիէր Սուոլիպենից ճիշտ ու որոշ հրահանգներ է ստացել այն դէպքի համար, եթէ որ ժողովրդական ազատութեան կուսակցութեան համագումարը տեղի ունենալու լինի Ֆինլանդիայում։ Մինիստրութեան պաշտօնեաները վկայում են, որ այդ հրահանգները բաւականին մեղմ բնաւորութիւն ունին։ («Н. Путь»)։

—Սեպտ 20-ին Պետերբուրգում լոյս է տեսել «Ժողովրդական սոցիալիստական Թերթի» առաջին համարը։ Առաջին համարում յիշված է հետեւեալ անուանացուցակը, որոնք մտնում են նոր ժողովրդական-սոցիալիստական կուսակցութեան կազմակերպութեան մարմնի մէջ. Անենսկի, Բէնեսա, Մ. Բերնշտամ, Բոգոբազ, Տան, Ելպատիեվսկի, Զաբլօտսկի, Կրիկով, Ն. Լուտուկին, Միակոտին, Պետրիշչեվ, Պէշեխոնով, Բոգդէ, Սեմենով, Տիտով, Զարնօլուսկի և Շնիտնիկով։

—Միապետական կուսակցութիւնների գործունէութիւնը լուրջ ուշադրութեան առարկայ է դարձել կառավարող շրջանների։ Ինչպէս հաղորդում է «Страна» լրագիրը, ներքին գործերի մինիստրութիւնը տեղեկութիւններ է պահանջել նահանգապետներից այդ կուսակցութիւնների կազմի, միջոցների, պարագուխների մասին, և այլն։ Առանձին ուշադրութիւն դարձրել է Ռիգայի նահանգապետը, թէ ում իշխանութեան մէջ։ Այդ նպատակով առաջարկված է շուտափոյթ տեղեկութիւններ հաւաքել. գաւառներում՝ զեմսկի նահանգապետների և ազնուականութիւնների պարագուխների միջոցով, գաւառական քաղաքներում իսպրաքնիկների, քաղաքային աւագների և ադմինիստրացիայի հայեցողութեամբ մասնաւոր անձի միջոցով։

—Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, Շիրվալի հեռանալը հոկտեմբերի 17-ի մանիֆեստից մեծ հարուած է կացնում կուսակցութեանը, որի գլխաւորները մեծ ոգեւորութեամբ ողջունեցին նրա հեռանալը։ Դրա շնորհիւ միութիւնը այժմ դանվում է միլենոյն վիճակում, ինչպէս որ առաջաւորագրեալներ կուսակցութիւնը, այսինքն մնացել է առանց հեղինակաւոր պարագուխների, որոնց կարող լինէին փնտռանալ ընտրողները իրանց շահերի պաշտպանութիւնը։

—Կիէվից «Бирж. Вѣд.» լրագրին հաղորդում են. բժիշկ Դուբրովինի Պետերբուրգից այստեղ գալը և ադիտացիա սկսելը եռանդ ներշնչեց ռուսաց ժողովրդի միութեան տեղական բաժանմունքին։ Մտադիր են մի շարք ժողովներ գումարել Դուբրովինի մասնակցութեամբ։ Դրագրում են սև հարիւրեակային մի նոր լրագիր հրատարակելու, որովհետև Kiev-ЛЯНИНЪ-ը ամբողջ Կիէվի համար բաւականութիւն չէ անում։ Սև հարիւրակայինները մեծ եռանդով տարածում են միութեան գաղափարները քարոզող թերթիկներ և բրոշիւրներ։ Հրեայ ազգաբնակութիւնը անարեկութեան մէջ է։

—Միապետական կուսակցութիւնների ժողովը որոշել է բոյկոտի ենթարկել պոլիտեխնիկումի այն ուսանողներին, որոնք բոյկոտի են ենթարկել պրոֆեսսոր Բիկաշեվին։ Բոյկոտը պէտք է արտայայտվի նրանով, որ պոլիտեխնիկումի ուսանողներին կը մերժեն ընակարան, դասեր և ճաշ տալ։ Որոշված է տեղեկութիւններ տալ բոյկոտի ենթարկող ուսանողների մասին միապետական կուսակցութիւնների խորհրդին, նոյնպէս և ժանդարմերի վարչութեանը։ Բոյկոտից ազատվում են միայն այնպիսիները, որոնք ոտնիս խօսքով վկայում են, որ Բիկաշեվի դէմ ուղղված բոյկոտին մասնակից չեն։ Վերջին դասախօսութիւններին ներկայ են եղել միայն 20 հոգի։ Օբստրուկցիայի դէմ կարծիք յայտնելով, ուսանողները վճռել են ընդհանուր ժողով գումարել բոյկոտի ենթարկվելի ուսուցչի վերաբերեալ հարցը վերջնականապէս լուծելու համար։

—Պրոֆեսսորնալ միութիւնների կենտրոնական բիւրոյի նիստին որոշել են, որ բանւորները, նաև քան գործադուլ յայտարարելը այս կամ այն արդիւնարբեր հիմնարկութեան մէջ, պէտք է բանակցութիւն սկսեն կենտրոնական բիւրոյի հետ մասնաւոր քննելու թէ որքան նպատակայարմար է և պատեհ գործադուլը։ Այդպիսով, բիւրոյի կարծիքով, խնայողաբար կը գործադրվի բանւորների եռանդը և անյաղթ գործադուլների թիւը զգալի չափով կը նուազի։ («Горн. Прон. Газ.»)

—«Մաղաղ վերանորոգութեան» կուսակցութեան զեկավարները մերժել են «հոկտեմբերի

17-ի մութեան» Մօսկվայի կենտրոնական կոմիտեի առաջարկությունը մասնակցելու սեպտեմբերի 20-ի նիստին Մօսկվայում։

ԿԱՌԱՎԱՐՁԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՒ ԼՈՒՐԵՐ

Ընտրողական օրէնքի փոփոխութեան հարցի մասին դէպի մի քանի բարձրաստիճան անձանց հայեացքներն ու տրամադրութիւնները ազդեցիկ շրջաններում վերաբերվում են անհամբերութեամբ։ Իր դիրքով անկախ լինելով՝ կառավարութեան կազմի փոփոխութիւններից բարձր պաշտօնեաների այդ խմբակը ընտրողական օրէնքի փոփոխման հարցի առիթով սկսել է նպաստաւոր կարծիք յայտնել Ռուսաստանում ընդհանուր ընտրողական իրաւունք մտցնելու մասին քառանդամ սիստեմով։ Միևնոյն ժամանակ ընտրողական օրէնքի այդ փոփոխութիւնը նրանք ասում են որ անպայման պէտք է կատարվի Պետական Դումայի միջոցով, և այն էլ ոչ ընտրութիւններից առաջ։ Թեստ ընդդիմութեան կը հանդիպի այդ պաշտօնեաների կողմից ամեն մի փոքր յարաբերական ընտրութիւններ մտցնելու համար Պետական Դումայի գումարումից առաջ։ Միւս կողմից, հարկաւոր է նկատել որ պետական գործիչներից նրանք, որոնց գրութիւն կախումն ունի բացառապէս ներկայ կառավարութեան քաղաքականութեան աջողութիւնից, անգամ յոյսեր են դնում ընտրողական օրէնքի աջով փոփոխութեան վրա, որը համեմատելով ուրիշ միջոցների հետ ամենաճշգրիտ միջոցն է համարվում Պետական Դումայում կառավարչական մեծամասնութիւն կազմելու համար։ («Страна»)

—Արդարադատութեան մինիստրը մշակել է օրէնսդրական հարցերի մի ծրագիր, որը պէտք է առաջարկվի Պետական Դումային։ Որոշված են 35 օրինագծեր։ հաշտարար դատարանները ընտրողական դարձնել, նորմալ դատաստանական բարեփոխութիւն մտցնել ծայրերկրներում, գործադրել նոր քրէական օրէնքները յարմարեցնելով նրանց հոկտեմբերի 17-ի մանիֆեստին և վերջնական տրատարակված օրէնքներին, փոխել դատավարութեան կարգը պետական և այլ յանցանքների համար։ («Р. В.»)

—Մօտ օրերս հրատարակվելու է կառավարչական մի նոր կարգադրութիւն հարկատու դասակարգին պատկանող անձանց համար գոյութիւն ունեցող սահմանափակումները և խտրութիւնները, պետական ծառայութեան մէջ մտնելու իրաւունքի համար, վերացնելու նպատակով։ Նոր օրէնքի հիման վրա մէջտեղից կը վերանան այդ պատկանող անձինք ազատվում են քաղաքացիական ծառայութեան գոլորցի, կուսակրօնութեան և քահանայութեան մէջ մտնելից, ազատվում են հասարակական վճիռներով արձակման համախմբական ներկայացնելուց։ Նոյն անձինք քաղաքացիական գոլորցներից,—կրօնական հաստատութիւնների, վանքերի ու հոգևոր կառավարութեան պաշտօնների մէջ եղած ժամանակ ազատվում են անհատական տուրքերից և հասարակական պաշտօնավարութիւնից։ Բացի դրանից, փոխվելու է բոլոր կատեգորիաների պատկանող հարկատու դասակարգերից պահանջվող անպայման զուրս գալը հասարակութեան մէջ մտնելու համար։ Հասարակութիւնից զուրս գալու հարցը կը թողնվի ցանկացողների իրանց կամքին։ Միևնոյն ժամանակ գիւղական ընակիչներին իրաւունք է տրվելու ուրիշ հասարակութեան հետ միանալու առանց այդ մասին թոյլտուութիւն խնդրելու վոլոստնոյ ժողովներից։ Ընդանք իրաւունք կունենան նոյնպէս ազատ տեղափոխութիւններ կատարելու և մշտական անցագիր ունենալու իրանց ցանկացած տեղում ապրելու համար։

—Դրա պատճառով վերանում են անցագրերի վերաբերմամբ բոլոր սահմանափակումները, որոնք տրվում են ոչ միայն տեղական հասարակութեան կողմից, այլ և այն տեղի ոստիկանութիւնից, ուր ինքը վերցնում է ապրում։ 1907 թուի յունվարի 1-ից այլ ևս չէ լինելու գլխահարկը, փոխադրամ երաշխաւորութիւնները զանազան տուրքեր վճարելու համար, և մի քանի խիստ միջոցներ, գիւղացիների գոյքի գրաւումը և այլն, որոնք գործադրվում էին տուրքերը հաւաքելու նպատակով։ («Нов. Вр.»)

ԲՈՂՈՔՆԵՐ

I

Յովհաննեան դպրոցի դէպքի առիթով

Թիֆլիս սեպտեմբերի 28-ին

Ներկայումս Յովհաննեան դպրոցը զարձել է մի խղճուկ գաւ, որի շուրջը հաւաքվել են պատառ պատառ անելու նրան։

Հայ հասարակութիւնը, որ իր աններելի անտարբերութեամբ լռում է այս հարցի առիթով, ժամանակ է, որ սթափվի և հաշիւ պահանջի ամեն մի այն խմբակից, որը իրան անուանում է հայ տառապեալ ժողովրդի պաշտպան և նրա անձնազոհ զինուոր։

Յովհաննեան դպրոցի մասին, ինչպէս կարդում ենք լրագրութեան մէջ, վերոյիշեալ պաշտպանները ոչ թէ ցաւակից են հայ հասարակութեան կարիքներին ու պահանջներին, այլ միմի կեղծ շահամոլ գործիչներ են հանդիսանում։ Ուստի հայ հասարակութեան բարոյական պարքն է դուրս հանել ասպարէզից այդպիսի կեղծաւորներին և ինքն մտածի իր կարիքների մասին։

Առաջին իմ յանդուգն առաջարկս այն է, որ քանի էջմիածնի վարչութիւնը լքված է և դանվում է մի քանիսի ազդեցութեան ներքոյ, թող հայ հասարակութիւնը պահանջէ, որ նա անպայման հրաժարվի իր պաշտօնից, որովհետև անհամապատասխան է ներկայ մոմենտի պահանջներին։

Աբր. Գրիգորեան

II

Հայի ճակատագրական դժբաղդութիւնը

Յովհաննեան ուսումնարանը իր ներկայ վիճակով նմանում է երկունքի արտասովոր ցաւերից բռնված գեղջուկ կնոջ դրութեան, որի մանկահասակ երեխաները միասին խմված անհամբեր սրտով սպասում են, թէ արդեօք իրանց սիրելի մայրը այդ օրնասական ճգնաժամից կազատվի և սկսէ իրանց խնամել խօսքով լաքիւսարները, ժամանակի ընթացքում ջրի տակ են անցել և այդպէս պատանվել։ Զեկուցանողը գտել է լաքիւսարները տեղական ձկնորսների ցուցմամբ, որոնցից նա հարցափորձեր է անում եղել այդ ջրի մեացորդների մասին։

Անուշեան զեկուցանողը նկարագրեց այն պեղումները, որ նա արել է Զորալու և մի քանի ուրիշ գիւղերի շրջաններում։ Պղտոմների միջոցով յայտնագործվել են մի շարք դամբարաններ և գերեզմաններ, որոնք Պատանումում են մարդկային հին պատմութեան բրօնզեայ շրջանին։

Դերեզմաններում գտնվել են կմախքների հետ միասին զանազան իրեր, օրինակ՝ թրեր, նիզակներ, նետեր, ապարանջաններ, ուլունքներ, անօթներ, սրուակներ։ Այդ իրերի վրա եղած մի քանի նկարները և զարդերը ցոյց են տալիս, որ այն ժամանակվայ արհեստը գտնվում է եղել բաւական բարձր ատիճանի վրա։ Մարդկանց գտնվելը պատկանում են դոլիխոցեֆալ տեսակին։

Ճիշդ ենթադրութիւններ անել այն ազգի մասին, որ ապրել է այդտեղ և որոշել այն դարը, երբ նա ապրել է, անկարելի է առայժմ։ Եւ թէև Նոր-Բայազետի գաւառում գտնվել են սեպագրութիւններ, սակայն նիթի չը կայ ուրանալու, թէ որքան դարձ են բաժանում միմեանցից գերեզմանները այդ սեպագրութիւններից։

Զեկուցումը առաջացրեց մտքերի փոխանակութիւն։ Հարց ծագեց ուրարտացիների, խալդերի, հեթէոների առաջնութեան մասին դէպի հայերը։ Ա. Բալանթար տուեց մանրամասն բացատրութիւն այն հետազօտութիւնների մասին, որոնք կատարվել են մի կողմից Ասորեստանում և Էլամների աշխարհում, միւս կողմից Հայաստանում Լէմանի և Բելի ձեռքով։

Նիստը շարժեց հետաքրքրութիւն ժողովականների մէջ, որոնք յայտնեցին իրանց շնորհակալութիւնը զեկուցանողին։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

VI

Այժմ մենք գիտենք, թէ ինչ բան է սահմանադրութիւն։ Գիտենք, որ իրական սահմանադրութիւն միշտ եղել է և կայ ամեն մի կազմակերպած պետութեան մէջ։ Գիտենք, որ իրական կամ գրաւոր սահմանադրութիւնը սկսել է կեանքի մէջ մտնել և սովորութիւն դառնալ Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից յետոյ միայն, այսինքն, երբ արդիւնագործութիւն ու կապիտալիզմն են զարգացնում և բուրժուազիայի թագաւորութիւնն է սկսվում։ Գիտենք նոյնպէս, թէ ինչպիսի նոր իրական ոյժեր են առաջ գալիս արդիւնագործութեան ու կապիտալիզմի զարգացումով, ինչպիսի դասաւորութիւններ են ընդունում նրանք զանազան դասակարգերի միջև, ինչպիսի նոր յարաբերութիւններ են ստեղծվում և թէ ինչպէս այդ բոլորը պայմանաւորում և հարկ ու անհրաժեշտ են դարձնում իրական սահմանադրութիւնը փոփոխութիւնների ենթարկելու և նրան համաձայնեցնելու կեանքի մէջ արդէն փոխված իրական սահմանադրութեան հետ։

Արդ՝ այս բոլորը մի որոշ չափով գիտնալով, մենք կարելի է ասենք, թէ [illegible] սահմանադրութիւն կարելի է սպասել մի այնպիսի երկրում, որտեղ դեռ չը կայ զարգացած արդիւնագործութիւն ու կապիտալիզմ, չկայ բուրժուազիա ու սեփականազուրկ պրոլետարիատ։ Իսկ ճիշտ հենց այդպիսի մի երկիր է ներկայացնում իրանից Պարսկաստանը, որը իբր թէ ձգտում է այժմ, Ռուսաստանի և միւս քաղաքակիրթ երկրների նման, դեմօկրատիկ, կամ, ուրիշ ճիշտ է ասել, բուրժուազիան սահմանադրութիւն ձեռք բերել։

Տեղն է այստեղ ասել, որ այն բոլոր դեմոկրատիկ ազատութիւնները, ինչպէս օրինակ խօսքի, մամուլի, գումարումների, խղճի և այլն ազատութիւնները, որոնք արդի բուրժուազիան սահմանադրութիւնների զարդը և թագն ու պսակն են կազմում, միշտ հին, նահապետական ժամանակներում, ֆէոդալական կարգերի օրով ոչ միայն գոյութիւն են ունեցել, այլ և նրանց սահմանափակումների մասին մարդիկ հասկացողութիւն էլ չեն ունեցել։ Եւ յիրաւի, ինչպէս կարող էին մարդիկ դիցուք ցենզուրայի և մամուլի կամ խօսքի սահմանափակումների մասին մտածել, երբ դեռ իսկապէս մամուլ էլ գոյութիւն չունէր ներկայ իմաստով։ Նոյնը կարելի է ասել և միւս ազատութիւնների սահմանափակումների մասին։

Հենց այդ է պատճառը, որ ներկայումս Պարսկաստանը իր այդ դեմոկրատիկ ազատութիւններով մի կատարեալ ասիական Շվեյցարիա է իրանից ներկայացնում։ Այնտեղ դեռ համարեա թէ բոլորովին չը կայ ոչ մի ցենզուրա, որովհետև կառավարութիւնը շատ լաւ գիտէ, որ իր երկրում ոչ մի անհանգիստ բան գրող չէ կարող լինել և ոչ էլ գրվածները կարդացող։ Պարսկաստանում ցենզուրայի դեր կատարողը ոչ թէ բռնապետական մի պետութիւն է, այլ աւելի հոգևորականութիւնը, որը նամանաւանդ Լաստիկի խիստ է մահմեդական շատ դաւանանքից դուրս եկած այլ և այլ աղանդաւորների վերաբերեալ։

Պարսկաստանում կայ և գումարումների կատարեալ ազատութիւն, որովհետև պարսիկ ժողովրդի միտքերը և այլ ժողովները տեղի են ունենում, լինի մզկիթներում, լինի հրապարակներում, մէմիայն հոգևորականների ու զանազան մօլլաների կրօնական բովանդակութիւն ունեցող ատատելական հեքեաթները լսելու և աւելի ու աւելի բթանալու համար։ Կատարեալ ազատութիւն են վայելում և կրօնական պրոպագանդիստ-դերվիշները, որոնք տարին տաներում ամիս գիւղից գիւղ և քաղաքից քաղաք են շրջում ու միմիայն ֆանատիկոսութեան հուրն արծարծում առանց այն էլ սաստիկ ֆանատիկոս ժողովրդի մէջ։

Պարսկաստանում դեռ չը կայ մինչև իսկ պասպորտային սիստէմ և մարդիկ ազատ են երկրի ներսում ամեն տեղ և ամեն ժամանակ շրջագայելու առանց որ և է անցագրի։ Գոյութիւն ունի միայն արտասահմանեան անցագիր, որը պէտք է գալիս օտար երկրներում միայն։

Ուրեմն, էլ ինչ դեմոկրատիկ ազատութիւնների մասին խօսք կարող է լինել Պարսկաստանում, երբ այդ ազատութիւնները արդէն գոյութիւն ունեն ու նրանց սահմանափակելու մասին դեռ ևս ոչ ոք չէ էլ մտածում։ Եւ այդ մասին դեռ մտածող չը կայ հենց այն պատճառով, որ այդ երկրում դեռ գոյութիւն չունեն այն դասակարգերը, որոնք, իրանց շահերով հակառակ լինելով հողատիրական ու ֆէոդալական կարգերին, գիտակցէին իրանց դասակարգային շահերը, կռիւ յայտարարէին այդ հնացած կարգերի դէմ։ Մինչ այդ դասակարգերը չեն լինում, մինչ նրանց դասակարգային գիտակցութիւնը չէ զարգանում ու կուրը չէ յայտարարվում, վերոյիշեալ ազատութիւնները սահմանափակելու մասին ոչ ոք չէ էլ մտածում։ Իսկ այդ դասակարգերը՝ բուրժուազիան և պրոլետարիատը, ինչպէս ասացինք, Պարսկաստանում դեռ չը կան և այնտեղ մինչև օրս էլ դեռ այն հողատիրական ֆէոդալական կարգերն են թագաւորում, որ գոյութիւն ունէին միջին դարերում եւրոպական երկրներում։

Ուրեմն, ով ումից և ինչ ազատութիւններ կարող է պահանջել Պարսկաստանում։ Միթէ զարերով ճնշված ու սարկութեան հասած գիւղացիութիւնը հողատէր ազատներից։ Բայց չէ՞ որ այս վերջինների մեծ մասը հենց ինքը բարձր հոգևորականութիւնն է, որի ազդեցութեան տակ է գտնվում ամբողջապէս գիւղացիութիւնը։ Բացի դրանից, երբ է տեսնված, որ գիւղացիութիւնը յեղափոխութեան նախաձեռնողը հանդիսանայ ու նրա առաջաւոր զունդը ներկայացնէ։ Նա միշտ և ամեն տեղ բուրժուազիայի և պրոլետարիատի եռանից է գնացել, իսկ Պարսկաստանում ոչ մէկը կայ և ոչ միւսը։

Ընդհակառակը, ինչպէս արդէն լաւ յայտնի է, Պարսկաստանի ներկայ «ազատագրական» շարժումների գլուխը կանգնած են հենց իրանք հողատէր ազատները, յանձին բարձր հոգևորականութեան և խոշոր վաճառականների ու «ասաֆիներին», որոնք միևնոյն ժամանակ և ամենամեծ կալուածատէրերն են։ Բայց միթէ սրանք այնչափ ճանձրացել ու զզվել են իրանց կատարած բռնակալութիւններից, որ այժմ ցանկանում են վերջ դնել նրանց և ազատութիւններ, օրէնք և արդարութիւն պարգևել իրանց զոհերին։ Դա, իսկապէս, շատ տարօրինակ կը լինէր։

Ճիշտ է, պատմութեան մէջ եղել են այնպիսի դէպքեր ու երկրներ, որտեղ հողատէրը ազնուականութեան մի մասը յեղափոխութեան կողմնակից է հանդիսացել, ինչպէս օրինակ, Անգլիայում, Ֆրանսիայում, Եպանիայում, Ռուսաստանում և այլն, բայց դա եղել է միշտ այն պարագաներում, երբ հողատէր ազնուականը կամ միևնոյն ժամանակ արդիւնագործ կապիտալիստ է եղել որի շահերը, իբրև կապիտալիստ, աւելի [illegible] նշանակութիւն են ունեցել, քան իբրև հողատիրոջ, և կամ, երբ յեղափոխութիւնը այնչափ զարգացած ու առաջ է գնացած լինում, որ հողատէր ազնուականները այլ ևս անհարաբերած յեղափոխութեան կողմն են անցել։

Պարսկաստանում այդպիսի բան էլ չը կայ։

Արդ՝ ինչ բան են ուրեմն Պարսկաստանի ներկայ շարժումները, ինչ է նրանց կուռիները և այդ ինչ իրական սահմանադրութեան մասին է խօսքը, քանի որ, կրկնում և շեշտում ենք մենք, նրանց մէջ իրական սահմանադրութեան ոչ մի փոփոխութիւն դեռ տեղի չէ ունեցել։ Իրական ոյժերը ու նրանց յարաբերութիւնները դեռ ևս չեն կրել այն փոփոխութիւնները, որոնք բնական կերպով ազատագրական շարժումներ առաջացնէին։

Ցայսմիջոց, որ այդ շարժումների գլուխն են անցած գլխաւորապէս բարձր հոգևորականները, որոնք, երբեք չը պէտք է մոռանալ, Պարսկաստանի ամենամեծ կալուածատէրերն են։ Նրանց հետ միասնաբար միացած են նոյնպէս խոշոր կալուածատէր սաասֆիներն ու վաճառականները, իսկ զրանք իրանց հետից քաշ են տալիս ազնտ ու խաւարամիտ ամբոխին։

Ցայսմիջոց, որ այդ շարժումները ամբողջապէս ուղղված են Շահի կառավարութեան դէմ, որից պահանջում են... ազատութիւն։

Բայց ինչ ազատութիւն կարող են պահանջել կառավարութիւնից ոչ պակաս բռնապետական ու կամայական հոգևորականները ու հողատերականները։ Անա հենց դրա մէջն է ամենամեծ հարցը և խնդրի անհասկանալի կողմը։ Սակայն այդ հանգոյցն էլ շատ հեշտ լուծելի է դառնում, երբ փոքր ինչ մօտիկից հետ ծանօթանում այդ երկրի արդի ամենաեսական վիճակի և զօրող իրական ոյժերի հետ։

Խ.-Ադամ

(Կը շարունակվի)

ՄԱՐԴՈՐՍՈՒԹԻՒՆԸ ԴՈՒՐԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 20-ին

Սկսվեց...

Մարդորսութիւնը այսուհետև էլ սկսվեց։ Աւազակները մինչև այժմ խճուղու վրա էին գործում մի քանի անմեղ ճամբորդներ արդէն նրանցից սպանված են։ Վանդված խճուղիով գնացող եկողը այժմ էլ մահվան վտանգը աչքի առաջ ունի։ Աւազակները դրանով չը բաւականացան և ինչպէս մեր անիշխանութեան մատնված երկրի ամեն տեղ, այնպէս էլ այստեղ սկսեցին աշկարայ մարդորսութիւն։

Սկսվեց ի հարկէ տուլերից։

Առաջին որը եղաւ Ն. Ղամբարեանը։ Երեկոյեան ժամի 7-ին իր չեչէն ծառայի հետ այգուց ձիով վերադառնալիս է լինում. գերեզմանատան մօտ 3 ձիաւոր չեչէններ առաջը կտրում և մահվան սպառնալիքներով պահանջում են, որ լուռ ուր որ կը ասեն, իրանց հետ գնայ։ Քաղաքի մօտով երկուսին էլ տանում են. Թիֆլիսի կամուրջը անցնելուց յետոյ չեչէն ծառային ձիուց իջեցնում ուղարկում են տունը, որ գնայ յայտնէ։ Աւազակները Ղամբարեանին և 2 ձիս թաղցնում են։ Գերուն տանելիս պատահում են կոզակների, սարաժենիկների, որոնք իրանց զորքը չեն համարում խառնվել «իրանց չը վերաբերվող գործում»։ Պատահում է նոյնպէս մի զօրօղլոյ—որին մի քանի մարդ են հանցնում և սպառնալիքներ դրկում պրիստաւին։

Չեչէն ծառան, ինչպէս ասում են, թէև գիտէ ուր են թաղցրել, բայց աւազակների վախից չէ յայտնում։

Աւազակները Ղամբարեանին ասել են, որ չը վախենայ, չեն սպանելու, միայն փողի համար են բռնել։ Պատիրել են իրանցից ոչ մէկին կառավարութեան չը մատնել, նոյնպէս և ոչ ոքին չասել պահանջված փողի քանակի մասին, հակառակ դէպքում իրանց չեչէն և լեզգի ընկերները քաղաքում ամբողջապէս Ղամբարեանի ընտանիքը կը կոտորեն։

Շատերն էլ ասում են, որ չեչէն ծառայի մատը խառը կը լինի այդ բանում և պնդում են—ասողն է, ինչի հայ ծառայ չէ պահում։

Եւ այսպէս մահվան սպառնալիքներով աւազակները իրանց միանգամայն ամենազնաւ են զարձնում, իսկ հրամանները ճար չէ մնում, պէտք է կատարել...

Ծածուկ են պահում, չեն ասում ինչքան են պահանջել, բայց հաւանական է. որ մեծ գումար պէտք է պահանջած լինեն։

Հարուստները հաշում են թէ արդեօք Ղամբարեանին ովքեր են յայտնելու և ինչ կարգով։ Բարատէրները բարերից զատում են. նոյնը կարող է նրանց հետ պատահել։

Եւ այսպէս մարդորսութիւնը այսուհետև սկսվեց...

Ղ. Սաղանդարեան

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇՎԵՑԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Ծանօթանալով շվեցարական դպրոցներում սովորող երեխաների կեանքի հետ, նրանց դէպի դպրոց ունեցած վերաբերմունքի հետ, մենք նկատում ենք, որ նրանց և մեր դպրոցների մէջ ահագին տարբերութիւն կայ։

Շվեցարիայում մինչև 15—16 տարեկան հասակը բոլոր երեխաները պարտաւոր են յաճախել դպրոց և ժողովրդական դպրոց են յաճախում բոլոր երեխաները՝ ազգաբնակութեան ամեն դասակարգից։

Բոլոր շվեցարացիների երեխաները դպրոց են յաճախում ձրի և վերջերս շատ դպրոցներում աշակերտներին ձրի տրվում են նաև դասական պիտոյքներ։

Ես այս յօդուածում մանրամասնօրէն չեմ խօսի շվեցարական դպրոցների ծրագրի և պարապմունքների մասին, թէև այդ շատ հետաքրքիր է։ Այս տողերում ինձ զրաղեցնողը դպրոցական կեանքի միայն մի մասնան է, ես համառօտ կը նկարագրեմ, թէ ինչպէս են կատարում հարցաքննութիւնները շվեցարական դպրոցներում։

Մեր մամուլի մէջ երբեմն լոյս են տեսել յօդուածներ, նկարագրելով հարցաքննութիւնների ֆիզիկական ազդեցութիւնը՝ մանուկների ֆիզիքական և բարոյական զարգացման վրա։ Մենք իրաքանչիւրը լաւ յիշում է այն օրերն ու գիշերները, երբ մենք անց ենք կացրել քննութիւնների համար պատրաստվելու։ Ամենը յիշում ենք, թէ ինչպէս թութակի պէս անգիր էինք անում, շատ անգամ չը կանգնելով, էլ չեմ ասում, թէ ինչպէս միշտ էլ բացակայ է եղել մեզանում մի քիչ քնաստ։ Վերաբերմունքը դէպի նիթը։

Մենք մօտեցել ենք հարցաքննութիւններին մտատանջված զրութեամբ, մեզ զրաղեցնողը եղել է միայն այն չարաբաստիկ տոմարը, որը պէտք է վերցնենք, այն թղթի կտորը, որ պէտք է մեր քաղաքը որոշի։ Միթէ, միթէ մի տարի ևս մենք պէտք է մնանք միևնոյն դասարանում։ և մենք մտատանջվում էինք, չարչարվում և կրկին ձեռք վերցնում դասագիրքը, ցանկանալով իրացնել այն, ինչից մեր յոգնած ուղեղները միանգամայն հրաժարվում էին։

Հարցաքննութեան օրը մեզ համար դատաստանի օր էր և այդ օրը ուսուցիչը մեզ թւում էր որպէս մի առեղ ոյժ, որ կամենում է մեզ ամեն կերպ ոչնչացնել։

Տեսնենք, թէ ինչպէս են կատարում հարցաքննութիւնները Շվեցարիայում և ինչ նշանակութիւն ունեն։

Շվեցարական դպրոցներում աշակերտներին մի դասարանից միւսը փոխադրում են միմիայն տարվայ մէջ արած յառաջադիմութեան հիման վրա և այդ պատճառով հարցաքննութիւնները այդ տեսակէտից ոչ մի նշանակութիւն չունեն։

Եւ որովհետև հարցաքննութիւններին նշանակութիւն չի տրվում, այդ պատճառով էլ զրութիւն չունեն վերաքննութիւնները։

Եթէ աշակերտը որևէ առարկայից թոյլ է և յետ է մնացել իր ընկերներից, այդ դէպքում նրա համար նոյնիսկ ուսումնական տարվայ մէջ նշանակած են ահաւոր դասեր այդ առարկայից հենց զպրոցում, կամ յայտնում են ծնողներին և բնակարանը տանը օգնում է երեխային պարապվելու։

Հասկանալի է, որ այսպէսի զպրոցներում և երեխաները մեռում են նոյն դասարանում երկրորդ տարին, բայց ընդհանրապէս այդ շատ սակաւ է տեղի ունենում, այն պատճառով, որ երեխաները իրանց դասը սովորում են հենց զպրոցում և տնային աշխատանք շատ քիչ է տրվում նրանց։ Երկրորդ տարին աշակերտը մեռում է մեծ մասամբ հիւանդութեան պատճառով։

Զը նայած, որ հարցաքննութիւնները ոչ մի նշանակութիւն չունին աշակերտների համար՝ մի դասարանից միւսը անցնելիս, բայց և այնպէս շվեցարական բոլոր զպրոցում նրանք գոյութիւն ունեն և այնտեղ կրում են բոլորովին այլ կերպարանք, քան մեզանում։

Մեզ զարմացնում է շվեցարական երեխաների վերաբերմունքը դէպի հարցաքննութիւնները։ Այն հարցին, թէ սարսափելի չէն նրանց համար այդ օրերը,—մեծամասնութիւնը պատասխանում է. չէ՞ որ հարցաքննութիւնները մեզ համար չեն, այլ սովորեցնողների. մենք ամբողջ տարին աշխատել և լսել ենք, և այժմ ուսուցիչներն են պատասխանատու մեր գիտութեան համար. չէ՞ որ ամօթը նրանցն է, եթէ մենք վատ պատասխանելու լինենք. այդ կը նշանակէ, որ նրանք մեզ վատ են սովորեցրել։

Մեզ համար, որ միանգամայն այլ բանի ենք ընտելացել, տարօրինակ են հնչում այս խօսքերը 12—14 տարեկան երեխաների շրթունքներից։ Եւ մենք աւելի շատ ենք զարմանում, երբ տեսնում ենք, որ այդ երեխաները հարցաքննութեան օրամուտին ուրախ, զուարթ խաղում են և երբէք չեն մտածում այն մասին, որ իրանք վազը քննելու են։ Միայն մայրերն են այդ օրերին հոգ տանում, որ իրանց երեխաները մաքուր հագնված լինեն։

Հարցաքննութիւնների մի օր առաջ բոլոր աշակերտների ծնողները զպրոցի վարչութիւնից ստանում են տպագրած յայտարարութիւն, որի մէջ յիշած են լինում առարկաների անունները և ժամերը. նոյնը հրատարակվում է և տեղական լրագրներում, և բացի դրանից առանձին հրաւէրներ են ուղարկում բոլոր ծնողներին և զպրոցի բարեկամներին։

Ուսումնական տարվայ ընթացքում անցած բոլոր առարկաներից քննութիւն չէ լինում այլ միայն մի քանիսից։ Յամառ հարցաքննութիւններ նշանակվում են միայն 5—6 առարկայի և այն էլ այնպէս են բաժանում դասարանների վրա, որ հնարաւոր լինի լսել բոլոր առարկաներից։

Իւրաքանչիւր առարկայից քննում մի քանի ժամ և յաճախ նոյնիսկ էլ ամենանպաստաւոր տարբերն դասարաններում։

Դպրոցը այդ օրը շքեղ, հանդիսաւոր զարդարանք է ընդունում։ Ամեն տեղ ընկնում ծաղիկներ և կանաչ։ Ամեն օրվայ հարցաքննութիւնն են։ Նում շարված են նստարաններ հանդիսականների համար, իսկ դրանց շուրջը և հետևը աթոռներ, հանդիսականների համար։

Դուռը այդտեղ չէը նկատի դասագրքեր, գէթ մի կարդալու ցանկութիւն։ Երեխաները նստած են իրանց տեղերը և սպասում։ Անա երդեցողութեան ուսուցիչը երգել է նրանց և լսվեցին մանկական զիլ ձայներ։

Երգում են բոլոր երեխաները, սաղմոսներ, երգում են սիրով, առանց ամաչելու, խմբովին և ուրախ։ Երգը վերջացաւ և սկսվեց հարցաքննութիւնը։

Բայց դասարանը շատ յաճախ բաղկացած լինում 30—40 երեխաներից և մեզ պէտք է ծիծաղելի է թւում, թէ ինչպէս կարելի է նշանակած այդ կարճ ժամանակամիջոցում քննութիւն կատարել և մի քիչ հասկացողութիւն կազմել զպրոցում դասաւանդվածի մասին, աշակերտների գիտութեան մասին։

Սակայն հենց առաջին հարցերից պարզ է ամեն ինչ, զործ զրված մեթոդի շնորհիւ։ Հարցաքննութիւնը կատարվում է հարց ու պատասխանով, զրուցատրութեան եղանակով։ Ուրեմն յետոյ մենք շատով կարողանում ենք զաղափար կազմել այս կամ այն ուսուցչի դասարանում զործ զրած ջանքերի մասին։ Երեխաները պատասխանում են նստած, մասամբ բարձր, պարզ և որոշ։ Տուած հարցերը ուղղված են լինում, խնդրելով բոլորին, բայց պատասխանում է նրան, նախօրօք իր ցանկութիւնը յայտնելով և թոյլատրութիւն ստանալով։

Զը նայած այն բանին, որ ժամանակը քիչ է, որ երեխաներից իւրաքանչիւրը պէտք է միայն 3—4 անգամ պատասխանի, բայց այնպէս զուք չատ պարզ, ընդհանուր գրութիւն էք ստանում մեզ մասամբ երեխաների զարգացման մասին։ Հարցերը շատ են էական ինդիրներ, մանրամասնութիւնը բաց են թողնվում, բայց պարզ կերպով տրված հարցերը, որոնք ստիպում երեխաներին մտածել և դատել, մեզ թոյլ են անում նրանց ներքին ամբողջը։

Անա, օրինակ, մայրենի լեզուի հարցաքննութիւնը։ Երեխաները նախ կարդում են որ և է յօդուած, իսկ յետոյ տալիս զանազան հարցեր, որ վերաբերում են ամենին, ինչ որ անցել են ամբողջ նախ տարվայ ընթացքում թէ գրականութիւնից և թէ քերականութիւնից։ Երեխաներին ստիպում էին բացատրել այս կամ նախադասութեան կազմութիւնը, նշանակութիւնը և այլն, յետոյ ոտանաւորներ են տալիս և վերլուծութիւններ կատարում։

Մինչդեռ երեխաները քննվում են, ուսանողները նայում են նրանց տետրերին, որոնք բոլոր տարիներից։ Այդպէս ուրեմն նրանք կարող ենք տեսնել միայն և նրանց գրաւոր աշխատանքները։

Առանձնապէս մեզ հիացնում է հարցաքննութիւնը՝ բնական գիտութիւններից։ Այստեղ մենք ականատես լինում ենք, թէ ինչպէս մենք սովորում էինք թութակի պէս, առանց հասկանալու, զանազան բոյսերի և կենդանիների անունները, մեքենայաբար, չը նայելով և չը քննելով այդ տարբերները։ Հասկացողութիւն անգամ չունենալով, որ այդ բոլորը աւելի հեշտ ու դիւրամատոյց են գտնում, երբ մեր ուսածը լինում է կենդանութեան ծոցում, փորձերի վրա։

Բնական բոլոր գիտութիւնները երեխաները սովորում են շատ սիրով։ Ուսուցիչը քննում է ֆիզիկայից և նկատում, որ շատ քիչ ժամանակ է ունեցել իր տրամադրութեան տակ։ Դասարանը շատ բազմաթիւ մնացել է։ Եւ ուսուցիչը հարցնում է ամենապարզ բաները, չը մտնելով բարձրագոյն մասնաւորութիւնների մէջ, բայց տարբերվում է հետաքրքրում է։ Համարեա բոլորին հետաքրքրում է։ Համարեա բոլորին հետաքրքրում է։ Համարեա բոլորին

նաև երգեցողությանն ու մարմնամարզությանը։ Այդ երկու առարկան ևս պարտադիր են։

Հարցաքննությունների ժամանակ կարելի է զգալի կարգել ոչ միայն երեխաների զարգացման մասին, այլև հանդիսատեսի զարգացման մասին, որպես մի միանգամայն սովորական բան է և կարող է զգլոցի համար ընդհանրապես լաւ հետևանքներ ունենալ։

Իմ թեմում է, որ ամեն մի մանկավարժ միանգամայն օգտակար կը գտնի շվեյցարական զգլոցներում կատարվող հարցաքննությունները այս ձևը։ Իսկ մեզանում կատարվող հարցաքննությունների մասին շատ բան կարելի է անել և շատ բան է ասված։ Վերջապես ժամանակ չէ, որ ուշադրանք վերացնել մեզանում գործադրվող հարցաքննությունների այն ձևը, որ ոչ միայն օգուտ չի բերում, այլև շատ վնասում է աշակերտներին՝ քայքայելով նրանց թե ֆիզիկական և բարոյական ժամանակ չէ արդեօք, որ մենք ևս ձգտենք մեր զգլոցական հարցաքննություններին տալ այն կերպարանքն ու նպատակը, ինչ որ տանք շվեյցարական զգլոցներում։

Վ. Տէր-Աբր.

Նուխի

ՀԵՄԱՐԱՆԻ ԿԵՆՑԻՑ

Այս տարի Գէորգեան տօնը Հեմարանում հանդիսաւոր պիտի լինի. այժմ Հեմարանում այս խորհրդի խօսքերն են հնչվում։ Այո, խորհրդի են այս խօսքերը, որոնք այնքան մեծ ուրախութիւն են պատճառել Հեմարանի աշակերտներին։

Անցեալ տարիներում հայկական տեսուչ իրականութիւնը ստիպեց թողնել հանդիսաւոր տօնակատարութիւնները, և Հեմարանի աշակերտները, որոնք ամբողջ տարին չորս պատերի մէջ փակված լինելով, վերջապէս մի օր էին ունենում հասարակութիւն տեսնել և հագիս ժայռչակ շփվելու նրա հետ, դրանից էլ զրկվեցին։ Կալուածների խրքունիս գրաւվելը բոլորի տրամադրութիւնը, իսկ արխնալի ներկան վերջնական զարկը տուեց այդ խորտակման։

Բայց այժմ, երբ արդէն կալուածները վերադարձրել են և շրջակայքը փոքր ինչ հանգարտվել է, Հեմարանի աշակերտների մէջ մի անհուն տենչ է ծնել, որ այս նշանաւոր տօնը լինի փառաւոր և որքան կարելի է շքեղ։ Եւ այդ բանը նրանց խոստացել են։ Մի քանի վայրկեան այդ խորհրդի խոստումը անհուն ուրախութիւն է պատճառում Հեմարանի աշակերտներին։ Բայց անցնում են այդ վայրկենները և աշակերտները սթափվում են, նայում են իրանց վրա, նայում են իրանց շորերը և պատը, գլխները լսում են, աշխատելով ուրիշ անգամ չը մտածել իսկ այդ մասին։ Ինչպես պէտք է Հեմարանական հանդիպի հասարակութեան իր ճղճված շորերով և փչացած, անպէտքացած կօշիկներով, և դրա վրա աւելացրէք այն խօսքերը որ լսում է միաներից։ «Հայր տեսուչը խոստացել է, բայց ասել է, որ փող չը կայ», «պ. տեսուչ ասել է այս տարվայ նոր շորեր և կօշիկներ չը լինեն արդէն աչքի առաջ ունեմ, բայց ես վաթնում եմ որ հայ էլ չը լինի»։ Եւ Հեմարանի աշակերտները մի քանի վայրկեան ուրախութիւնից յետոյ սարսափում են, և ամբողջ մտածում են։ Ոչ են վանքի փողերը, ոչ է վանքի հացը, ոչ է վայելում վանքի բարիքները...

Եւ իրականութիւնը պատասխանում է. վանքի փողերը, վանքի բարիքները, ժողովրդի արիւն քրտինքը, հասարակութեան կրթութիւնը, կողոպտել են, գողացել նրանք, որոնք նստած վանքի մէջ կրծում են նրա սիրտը և փորում են նրա հիմքը։ Տխուր է իրականութիւնը։

Արմայիս Աղշարունի

ՏԵՂ ՉԸ ԿԱՑ

Ուսումնական տարին արդէն թեւակոխել է ամենուրեք և զգլոցները լցվել են աշակերտների հոտ բազմութեամբ։ Նրանք որպէս մի հսկայական փեթակներ, դեպի իրանց են գրաւել անթիւ մեղուներ՝ պատրաստելու քաղցր և կենսաբեր մեղր ապագայի համար...

Այո, իւրաքանչիւր ծնող, իւրաքանչիւր ինամակալ, իր որդու կամ իր անանկի թանկագին, ապագայի փայլուն յոյսերով տանում է նրանց զգլոց յանձնելու, զգլոցը, որից սպասում են ամեն բան... Բայց երանի թէ մեր զգլոցները գէթ կիսով չափ կարողանային յարգել տալ իրանց բազմաթիւ դիրքերին։ Սակայն իրականութիւնը այլ է։ Ես չը գիտեմ թէ ամեն մի ծնական կամ մասնաւոր զգլոցներից որքան և ինչ թուով աշակերտներ են հեռացել տարվի մեծութեան և տեղ չը մնալու պատճառով։ Բայց Ներսիսեան զգլոցում գէթարտաբար ակնառու եղայ այդ բանին։ Ամսի 11-ին վաղ առաւօտից բոլոր ինդրատուները իրանց երեխաներով արտատրոի սպասում էին, այն բախտաւոր թոռէին, որ ահա կը հնչվի իրանց անունը իբրև ընդունվողի։ Հասաւ թոռէն, կարդացվեցին միայն մի շարք անուններ, որոնք երկուսրեց արու ծնածների նման հրճուանքով և ուրախութեան ցօղն աչքերին քաշվեցան մները, օրհնելու մեծ հիմնադրի յիշատակը և բարի հոգարարձուներին։

Սակայն այդ բախտին չարժանացաւ նորեկների տասաւոր մասը. նրանց անունները օրհնեալ ցուցակում չէին գրվել և չը կարդացվեցին։ Նրանք յայտնեցին՝ «միւսների համար տեղ չը կայ» կարճ և հեշտ արտասանելի խօսքիր. տեղ չը կայ... երկու բառ միայն, բայց երկունքից ծանր մուրճի թափով խօսքեր, որ իջան, ջախջախեցին գեղուն յոյսեր, զուցէ և փայլուն ապագաներ։ Լաց, սուգ, ողբակ, յիշոց, անէծք, բողոք ի մի խառնվեցան. բողոքում էին կողմնապահութեան, խնամութեան դէմ. ցանկալի էր այդ իմանալ։ Ցուսահատութիւնը նրանց ամեն բան անել էր տալիս. և տեղիք ունէին յուսահատվելու, որովհետև Ներսիսեան գլխոցի գռները փակվեցին նրանց համար, իսկ միւս ուսումնարաններումն էլ այլևս ընդունելութիւնը վերջացած է, տեղ չը կայ։ Էլ ինչ պիտի անէին խեղճերը, էլ ոյժ, հնարաւորութիւն կունենան պատասխանելու, կամ յոյս կունենան զոնէ միւս տարի բախտաւորների շարքն ընկնելու։ Ո՛չ, նրանք այդ յոյսը ևս չունէին, օրինակներ շատ են եղել, փորձվել են. հետևապէս ինչպես մի ազիզ, մի նուիրական բան կորցրած տխուր ու տրտում ու անմխիթար թողին զգլոցը՝ անիծելով իրանց չար բախտը։

Այն հանգամանքը, որ Թիֆլիսը ներկայումս ամենատպաւով վայրն է համարվում ամբողջ Կովկասում, դէպի իրան է գրաւել անապահովների մի մեծ հոսանք աւերված վայրերից, որոնք անօրէն հալածանքներից փախուստ տալով, թողել են տուն ու տեղ և ամեն ինչ ու դիմել սև գաղթականութեան, գէթ իրանց կեանքը ազատելու սպառնացող վտանգներից։ Ահա, այդ գաղթականութիւնն է ապառաջը, որ այս տարի Ներսիսեան զգլոցից դիմողների թիւը անհամեմատ բարձր է միւս տարիներից։ Ասում են, որ խնդրատուների թիւը հասել է մօտ 700-ի, էլ ինչ կասեմ, որ զգլոցը այդ անգին թուի հազիւ թէ մի փոքր մասը կարող լինէր ընդունելու։ Իսկ մնացած մեծագոյն մասը, որոնց յայսոյր որվեց թէ «տեղ չը կայ» ուր պիտի դիմեն և ինչ պիտի անեն. ով պիտի նրանց մի ելք, մի ճանապարհ ցոյց տայ—յուսահատութիւնից և կորստից ազատելու...

Մի այդպիսի ժամանակ, երբ խօսում ու ձգտում էինք ուսումն ու կրթութիւնը պարտադիր դարձնելու, յանկարծ «տեղ չը կայ» ասելով փողոց ենք նետում հարիւրաւոր հայ մանուկներ։ Որքան մօտ են մեր խօսքն ու գործը իրար։

Զարիքի առաջն առնելու համար կառաջարկէինք Ներսիսեան գլխոցի յարգոյ հոգաբարձութեան՝ բաց անելու մի երկու տարրական հայ զգլոցներ Թիֆլիսի ծայրամասերում, ինչպես, օրինակ, Նախալովկա, Խարխուն և մանաւանդ Վերա, ուր հայ լեզուի և հայ զգլոցի հոտ չը կայ, ու այնտեղ տեղաւորել «տեղ չը կայ» ին ենթարկված մանուկներին։ Վերայում մենք գիտենք մարդիկ, որոնք խոստանում են օգնել որոշ գումարներով այդ ձեռնարկութիւնը, եթէ նախաձեռնող կը լինէր։ Պէտք է շտապել։

Կարապետ Ղազարեան

ԻՄ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԱՍԽԱՆԸ

(Նամակ խմբագրութեան)

Աշուղի երգը երբ հասնում է նէրսիմ-նէրսինին է ընկնում։ Պ. Յովհաննիսեանը առանց փաստերի պատէպատ է ընկնում մի կերպ դուրս պրծնելու, սակայն այս դէպքում նրա «փաստաբանական» ամբողջ հմտութիւնը անկարող է նրան մատչափ օգնել։

Անցնենք կէտ առ կէտ պ. Յովհաննիսեանի փաստաբանական մարգարիտներին։

«Մկրտից և եթէ պայմանագրվել են հաղարտեցիների հետ մայրաքաղաքից փաստաբան հրաւիրել,—գրում է բարեգործ ադвокатъ-ը այն դէպքում, երբ այնքան գումար գտնվի, որ միմիայն այդ փաստաբանին կարելի լինի յանկացնել տունուգն հազար հինգ հարիւր բուբլի... Որ ես հաղարտեցիների գիտութեամբ հրաւիրել եմ որոշ վարձով Թիֆլիսի փաստաբաններից, երբ պարզվել է, որ անհնար է փաստաբան հրաւիրել մայրաքաղաքից։ Ահա ազգային փաստաբանի արգումենտները։ Կատարեալ աչքապատիութիւն։ Նախ մենք հարց էինք տուել պարոնին՝ ասացիր լ է արդեօք հաղարտեցիներից 1200—1500 բուբլի յանկարծ Պետերբուրգից իրաւաբան հրաւիրելու համար։ Պարոն Յովհաննէսի սեռը փոխանակ հարցին ուղղակի պատասխանելու սար ու ձոր է ընկնում։ Մենք պնդում ենք, որ պ. Յովհաննիսեանը ասացել է այդպիսի գումար և ասում է հրապարակով, թէ այդ նպատակով գումար չէ ասացել։

Երկրորդ սուտ։—Հաղարտեցիները մինչև դատի օրը սպասում էին, որ Պետերբուրգից իրաւաբան կը գայ. դատի օրը բոլորն էլ զարմացած մնացին, երբ իրաւաբան չեկաւ Պետերբուրգից, մանաւանդ նրանք, որոնք անմիջապէս յարաբերութեան մէջ էին պ. Յովհաննիսեանի հետ այդ գործի առիթով, որոնցից մէկը եղել եմ ես նուաստս (գուցէ այս յայտնութիւնը այնքան էլ հաճելի չը լինի պ. Յ-ի համար). հետևապէս պ. Յովհաննիսեանը ոչ մի հաղարտեցու գիտութեամբ չէր կարող հրաւիրել Թիֆլիսից վարձված իրաւաբան—այս խնդրի առիթով պ. Յովհաննիսեանը նոյնպէս ստում է։

Երրորդ սուտ—Ստում է պ. Յովհաննիսեանը, որ 1200—1500 բուբլի ստացել է զանազան ծախքերի համար։ Նախ բոլոր փաստաբանները ըստ իրանց յայտարարութեան պարտաւորում էին ձրի. բացառութեամբ այդ մէկի, որի մասին ոչ ոք հաղարտեցիներից տեղեկութիւն չունէր, հետևապէս ծախքերի համար ամենաշատը՝ անհրաժեշտ էր 200 բ. Հարց. ինչու համար էր պ. Յովհ.-ը քաղցած գլուղացիներից ստանում մի այդպիսի խոշոր գումար։ Կարծեմ պարզ է։ պ. Յովհաննիսեան։ Շատ տարօրինակ է պատասխանը թէ ինձանից հաշիւ չեն պահանջել, հետևապէս փոխելը չեմ վերադարձրել. պարոն «ադվոկատը» շատ լաւ գիտէ այն հաղարտեցիների տնտեսական վիճակը, նա գիտէ, որ ամբողջ չորս տարի հաղարտեցիք ցանքս չեն արել, և այս տարվայ ցանքսն էլ կարկուտը տարաւ ամբողջապէս և գիւղացիք մուրացիկ են դառել. հապա ո՞ր բարոյական մարդը այդպիսի պայմաններում «կը պահի» գիւղացու պարտքով վերցրած կոպէկները, չը նայած դառը ահա երկրորդ տարին է ինչ վերջացել է։

Սրանք փաստեր են, պ. Յովհաննիսեան, ձեր «գործունէութեան» տարեգրութիւնից, փաստեր մեկի պէս ցցված։ Մենք չենք յիշատակում ձեր գեղեցիկ վերաբերմունքը դէպի իրաւաբան Խամենտովսկին։ Այդ մասին՝ երբ հարկի կը պահանջի։

Մինչեռդ դատարանի մասին ձեր տրած ակնարկին ես պատրաստ եմ ամենայն ուրախութեամբ, միմիայն մի պայմանով, որ ամբողջ գործը մամուլի մէջ տպագրվի դատարանի դատավճռի հետ միասին։ Ձեր մամուլի միջոցով համաձայնութեան դէպքում ես կընշանակեմ իմ ներկայացուցիչներին։ Մինչեռդ դատարանը ընդունելու դէպքում իմ անունս և ազգանունս կարող էք իմանալ «Մշակի» խմբագրութիւնից։ Սպասում ենք։

Հաղարտեցի

ԲԱԳՈՒԻ ԽԼՐՏՈՒՄՆԵՐԻՑ

Յուլիս

Բաղաքի հայոց մասում սարսափ և իրարանցում է տիրում. յամառ լուրեր են պատում, որ մէկը միւսի հետից կազմակերպվում են մի քանի ծայրայեղ խմբեր՝ ամենաթունդ գործողութեան միջոցներով։ Դրանց անունանում են «անարխիստներ»։ Լուրերից անմիջապէս յետոյ երևան է գալիս նրանց գործողութիւնը։ Մի քանի սպանութիւններ և թալաններ հետևում են իրար հայոց մասում։

Սկսվում են բանտարական գործադուլներ հայ ֆիրմաներում։ Բանտարների բաւարարութիւն տալը ձգձվում է. իսկայն կարմիր շէֆը իր մի քանի զինակիցներով՝ զինված «մաուզէրներով» կառքով պտտում են Բիբի-Հէյբաթ, Բալախանի, բանակցութեան մէջ են մտնում բանտարների հետ՝ բացի պահանջներին բաւարարութիւն տալուց, տուգանքի ենթարկել «խաղէրներին» միայն այն պայմանով, որ ստացված կանխիկ գրամի մի մասը իրանք վերցնեն։ Համաձայնութիւն տալուն ու գանձելը մէկ է լինում։

Օգոստոս

Այս անգամ գործադուլը Նոբէլի և Բոտշիլդի ֆիրմաներումն է. բանտարները գուրս են մացել. ֆիրմաները վճռել են ոչ մի բաւարարութիւն չը տալ. բանտարներն ոյժից ընկել. քաղցած են։ Սակայն անարխիստները լուռ են. նրանք վճռել են ոչ մի կերպ չը միջամտել, չը լինի թէ բանտարներն երես անեն, կամ իրանց հետ օրէնք թիւրիմացութիւն պատահի։

Հայ խմբապետներն անկարգ ամենքն «ազդ» են ստացել, որով «անարխիստները», պահանջում են որոշ գումարներ. չը վճարելու դէպքում՝ խնդրում են «մեռա բարև» ասել կեանքին։ Հայերը՝ թէ ունեոր և թէ չունեոր՝ լուռ, հնազանդութեամբ, ինչպես կը վայելէ ջերմեռանդ քրիստոնեային, վճարում են թալանման դէպքերի նկարագրութիւնը տեղական լրագրերում կարդալով հայերը հանգստանում են։

Գիշերը է։ «Պալէ-Կրիստալ» կաֆէ-շանտանում սովորական զուարճութիւնները բացակայում են. բոլոր օրիորդները յատուկ պատէրով հրաւիրված են առանձնասենեակներից մէկը. այնտեղ զուարճանում են «կարմիրները»։

Սեպտեմբեր

Կառավարութիւնը վճռել է վերջնականապէս վերջ տալ «անարխիստների» գործունէութեանը։ Ամբողջ զօրագունդ, կազակներ, հրացաններով զինված ոստիկաններ ներս են խուժում հայոց մասը և, փոխանակ «անարխիստներին», հրացան են բռնում մի տուն, որտեղ ապրում են խաղաղ, «անարխիստների» սատերից վախեցող ընտանիքներ, տակն ու վրա են անում ամբողջ ունեցածները և այն թանկագին իրերը, որ «անարխիստները» ետեւորդ բեռ են հաշում վերցնելու, ոստիկաններն ու զինուորներն են թիթեռացնում։ Դեռ լաւ է, որ ընակիչներից ոչ ոք, թէկուզ ամիր, ստրճանակ չէ պարզել, թէ չէ՝ ամենքին պատրաստվել էին սրի անցկացնելու։

Ենորհիւ կառավարութեան այդ խիստ միջոցների, «անարխիստներն» առժամանակ դադարեցրին իրանց եռանդուն գործունէութիւնը. յարձակման ենթարկված ոստ հարիւրաւոր գնդակներից փշրված ապակիները նորոգվեցին և ընակիչները մի քանի օր հնարաւորներում անցկացնելուց յետոյ՝ վերադարձան։

Այդպէս օրը տեղական «Каспій» լրագրի № 198-ում լոյս տեսաւ հետևեալ բաց նամակը. «Վերջին ժամանակներս մի քանի մուսուլմաններ սկսել են ստանալ սպառնողական նամակներ զանազան կուսակցութիւնների տարբերութեամբ, օր. «Սև ադաա», «Կարմիր հարիւրեակ», «Տեռորիստներ», «Անարխիստ» և այլ աւազակային չարագուշակ անուններով։ այս ու այն կուսակցութեան կամ անդրանիկների օգտին փող պահանջելով։

«Պահանջը չը կատարելու դէպքում ամենայն սիրով խոստանում են չը ըստղին սիրելի գնդակ, կամ թէ ուղղակի ռումբ։

«Վրդովված զանազան տիպի տեռորիստների այդ վերջին ծայր յանդգնութեամբ, մենք մուսուլմաններս պարտք ենք համարում յայտարարել ի լուր ամենեցուն, որ այդօրինակ շանտաժները և սպառնալիքները մեզ համար երկիւղալի չեն, և եթէ վերջ չը տրվին այդ կեղտոտ գրութիւններին իրանց յանդուգն պահանջներով կամ եթէ որևէ մի կուսակցութիւն կը փորձէ ի կատար ածելու իր սպառնալիքը, այն ժամանակ մենք ամբողջ մասսայով կաշխատենք բանալ այդ շանտաժիստների և նրանց գլխաւորների որջը և նրանց ամենաուժեղ հարուածը կը հասցնենք չբնանյելով ոչ աշխատանք, ոչ կեանք, ոչ փող։

«Մենք միշտ պէտք է հետևենք հետևեալ զեվիզին.

«Не троньте насъ, не тронемъ васъ,
Тронете насъ, поплатитесь сторицею»։

«Մուսուլմանները հաւատացած են ազգայնակութեան բոլոր խեղացի մասի համակրութեանը և օգնութեանը»։ Մի խումբ մուսուլմաններ։

Հետևեալ օրը և եթէ տեղական միւս «Баку» թերթի № 199 ում լոյս տեսաւ հետևեալ հերքումը։

«Անարխիստ - կոմունիստների կարմիր կնիքով մեր խմբագրութեան մէջ ստացվել է մի յայտարարութիւն, որի մէջ ի միջի այլոց ասված է «Անարխիստ-կոմունիստների Բաքուի խմբակը յայտարարում է հետևեալը. 1. մինչև այժմ ոչ մեր և ոչ մեր ընկերների կողմից ոչ մի սպառնողական նամակ չէ ուղարկված ոչ «մի քանի մուսուլմաններին» և ոչ էլ ընդհանրապէս մուսուլմաններին (իսկ հայերին՞ 2. այդպիսի նամակները արհեստով լրտեսների պրովոկացիան է. 3. Բաքումն «Սև ադաա» գոյութիւն չունի, իսկ «Կարմիր հարիւրեակը» և զանազան «տեռորիստներ» անարխիստական խմբեր չենք»։

Մեր հարևանները ամեն կողմից մեզանից շատ բաղդաւոր են. նրանց մի նամակն անգամ սարսափ է ազդում նոյնիսկ «անարխիստների» վրա, իսկ ամբողջ հայ ազգաբնակութեան հանրակումը կառավարութեան ձեռքով՝ ընդհանրապէս այդ պարոնների և հայ զրպարտիչների զարտարկումը նրանց վրա ոչ մի ազդեցութիւն չէ թողնում։

Սլաք

ՀԱՐՅԸ ՊԱՐԶՎԱԾ Է

Այս վերջին ամիսներում Դաշնակցութեան կառավարող մարմիններում գործողներից ոմանք, ոգեորված նոր սոցիալիստական գաղափարներով, աշխատում էին զրանք պատուաստել մեր ժողովրդի կեանքին և սեռ հանդիպ առաջ էին մղում մեր աշխատաւոր դասակարգերի մէջ դասակարգային կռիւը, իսկ գիւղական շրջաններում հողային հարցը։

Դրանց այդպիսի գործունէութիւնը, գեռ չը հաշված այն անյաջողութիւններն ու զրկանքները, որոնք ի թիւս այդ պատճառների արդիւնք էին լինում նրանց վերին ատիճանի փութկոտ, շտկված ու անխորհ վերաբերմունքի դէպի իրանց ձեռք առած այդ փափուկ խնդիրները, չէր կարող ցաւմունք և բողոք չառաջացնել այն դաշնակցականների կողմից, որոնք չէին կարող թոյլ տալ Դաշնակցութեան ոյժերի որևէ վատնում այսպէս Անդրկովկասում, քանի որ ընդունում էին Դաշնակցութիւնը հիմնված միմիայն Տաճկահայաստանի համար, որտեղ 15 տարվայ շարունակ ոյժերի լարումն անդամ դեռ չէր կարողացել կորզել փռած Տաճկաստանից մի իսկոյն 61 յօդուածի իրագործում... իսկ դեռ մէկի հետ այնտեղ իր հաշիւը չը վերջացած Դաշնակցութիւնը մարտարուէր է կարգում այստեղ մի աւելի մեծ ոյժի... Մինչդոյն ժամանակ էլ աշխատում էր իր ձեռքն առնել ու զեկավարել այստեղ մեր ազգային գպրոցական հասարակական հաստատութիւնները...

Քանի որ անկարելի եղաւ այդ պարզ ճշմարտութիւնը ներքին տան լաւ տանող ժողովներով ու վիճաբանութիւններով հասկացնել ոգեորութիւնից խնամատարութեան հասած «նոր» ընկերներին, ուստի այդ հարցը հրապարակ բերվեց մամուլի մէջ և թէպէտ «Մշակ»-ում բաւմաթիւ էջեր նուիրվեցին այդ խնդրին, բայց այնուամենայնիւ նա դարձեալ մնաց անվճռ... Վիճաբանութիւններն այն ոգով կերպարանքն ստացան վերջապէս, որ հիներն սկսեցին ծարել նորերին, սրանք էլ ի հարկէ խօսքի տակ չէին կարող մնալ և կուշտ հայհոյեցին նրանց... Այդ վէճին սիրում անտարբեր Դաշնակցութեան զինուորական մասերը ևս միմիանգամայն սկսեցին միմեանց սպառնալ... Եւ այս գրութեան մէջ այդ խնդիրն սպառնում է դեռ երկար ձգձվել։

Իսկ այդ հարցն արդէն բաւականին ծեծված և բոլորովին պարզ է։ Ընդունելով, որ սրանից յետոյ ստվածներն արդէն կրկնութիւններ են լինելու մինչև այժմ մեր մամուլի մէջ գրված-ների, կարծում ենք պէտք է այդ հարցը փակված համարել և այլևս մտաբերում ն ա համար նոր էջեր չը գրաւեցնել։

Իսկ ինչ վերաբերում է այդ վիճելի խնդրի վերջնական այս կամ այն կերպ լուծմանը, դա, ի հարկէ, լիովին կախված է Դաշնակցութեան ընդհանուր ժողովի վճռից, որ ցանկալի է որ քան կարելի է շուտ լինի։

Լ. Մարկոսեան

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Ահա տարուց աւելի է, որ մենք ակամա՛ս ենք եղբայրասպան կռուի։

Երկու ազգային կուսակցութիւնները, (հնչ. և դաշն.) սկսել են իրար կոտորել... և եթէ այդպէս շարունակվի, երևի մենք շատ կարճ ժամանակից յետոյ հանդիսատես կը լինենք մի այնպիսի տխուր տեսարանի, որի առաջ կանչեստանան վերջին դարի կրած մեր դժբաղդութիւնները։

Դեռ այդքանը ոչինչ...

Դարձեալ այսօր մենք տեսնում ենք—Երևանի գաւառում՝ այդ հերոսները պաշարում են հայկական գիւղեր, բանութեամբ, մարակի ոյժով այս կամ այն գիւղը իրար ձեռքից խլում են, և ստիպում են լինել դաշն. կամ հնչակ. պարզ յայտնի է, որքան ձեր անունից խօսող այդ հերոսները համայնքներ գրաւեն, բայց այնուամենայնիւ չեն կարողանում ցանկալի նպատակին հասնել։

Սակայն իրողութիւնը այլ է. ամեն մի ազատ երկրում, որտեղ օրէնքը իրան ժողովրդի ձեռքին է, այդտեղ կայ ի միջի այլոց խղճի, խօսքի և համոզմունքի ազատութիւն որտեղ մարդիկ այս կամ այն համոզմունքը դաւանելու համար իրար չեն կոտորում։

Ո՞վ է այս ամենի մէջ մեղաւորը. դուք, դուք էք, որ ձեր անտարբերութեամբ աւելի էք խրախուսում, և յեղափոխական սուրը զործը խայտառակութեան հասցնում։

Այն համակոլս կոչ ենք անում ձեզ. ժամանակ է, հասկացէք բոպէի լուրջ դրութիւն, և ձեր հեղինակութեամբ ոտնձգողներից այդ «սոցիալիզմի» անունից խօսող յեղափոխականներին, որոնք չը գիտեն իրանց ինչ անելը... Բաւական է որքան լսեցինք, և որքան անմեղ արիւն թափեցին։

Իսկ ժէնք, բանտորներս, որպէս թշուառ ժողովրդի թշուառ զաւակներ, մեր խորին բողոքն ենք արտայայտում այդ անմիտ, եղբայրասպան կռուի դէմ։

Ի դիմաց մի խումբ բանտորների՝

Ֆ. Զաքարեանց

Բալախանի, սեպտեմբերի 11-ին։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բալախանի, 24 սեպտեմբերի

Կարդալով «Մշակի» 205-րդ համարում Տեղ գիւղից Նիկոլայ Տէր-Սահակեան ստորագրութեամբ նամակը, յայտնում ենք մեր խորին զղջանքը Տեղ գիւղի Դաշնակցութեան ներկայացուցիչ Սողոմոնի այդ վայրենի և անմարդամարդ վարմունքի դէմ։ Մենք, որպէս դաշնակցականներ և նախաձեռնիչներ այդ կուսակցութեան պատուին, բարբում և միևնոյն ժամանակ պահանջում ենք Դաշնակցութեան բարձր վարչութիւնից անպայման քննութեան առնել այդ դէպքը և, եթէ իրաւացի է, մերկացնել փաստը և այդ մասին հրապարակային տեղեկութիւն տալ, որով բարձրացած կը լինեն Դաշնակցութեան պատիւ և ոյժ ստաւ, որ իրանք հակառակ են ներկայացուցչի այդ վարմունքի հակառակ դէպքում, Դաշնակցութեան հասցէին բոլոր գրածները ու խօսածները մենք կը համարենք իրաւացի, որոնց մենք մինչև այժմ համարում էինք զրպարտութիւններ, կամ թիւրիմացութեան արդիւնք։

Ի դիմաց 25 դաշնակցականների՝

Հմայակ Բարաջանեան
Մակար Տէր-Օհանեանց

Թիֆլիս, սեպտեմբերի 21-ին

Կան այնպիսի իրեր, որոնց միայն մաքուր ձեռքերով կարելի է ժեռնալ, և կան այնպիսի գործեր, որոնց մաքուր մարդի կարող են ձեռնարկել։ Այդպիսի մի գործ տաճկահայ ժողովրդի ազատութեան սուրբ գործն է։

Նրանք, որոնք շահագիտական նպատակով են ժեռնում այդ գործին, և նոյնպէս նրանք, որոնք ուրիշի աշխատանքով և արիւնով են ուզում իրանց համար անուն և հասարակական դիրք ստեղծել, այդպիսիները հեռու պիտի մնան տաճկահայ սուրբ գործից։ Այդ գործը շատ է սուրբ և մաքուր։ Գեղտոտ ձեռներ և գեղտոտ հոգիներ կարող են նրան պատռտուրել։

Ճանաչենք մեր իսկական բարեկամներին և թշնամիներին և չը շլանանք նրանց քաղցր խօսքերից... Միայն ոստիկանութեանը վայել հարցաքննութեամբ չը գիտենք Հ. Յ. Դաշնակցութեան մարմիններին և չը պահանջենք նրանցից, որ պարզեն հասարակութեան առաջ ապագայում կատարվելիք յեղափոխական գործողութիւնների ծրագիրները, որով միայն և միայն ՇԱՏԱԾ կը լինենք մեր դարձն։

Մուշեղ

Թիֆլիս, սեպտեմբերի 27-ին

«Մշակ»-ի № 209 տպված լուրը ճիշտ չէ. անա եղելութիւնը այսպէս է. Մ. Պապիկեանցի ապրանքը գողացված է ոչ թէ 22-ին, այլ սեպտեմբերի գիշ. և 20-ին ոստիկանութիւնը 6½ ժամին գտել է Օ. և Մ. Յարութիւնեանցի խանութում, իսկ ինձ ոստիկանութիւնը յայտնեց 7 և կէս ժամին ասելով. ձեր ապրանքը արդէն գտնված է և տարված է ոստիկանատուն։ Ժամի 8-ին գնացի և ապրանքը տեսայ ոստիկանատուն երկու արկղի մէջ, իսկ Յարութիւնեանցը տեսնելով որ իրանց յանցանքը չեն կարող ծածկել, ժամի 9 ից անց ինքը մեծ երդվյալ Յարութիւն Յարութիւնեանցը գիտեր ինձ ասելով, թէ ձեր ապրանքը մենք առել ենք 200 ր. եկէք և ստացէք միայն չեմ յայտնի գողի ով լինելը այսպէս է իսկական եղելութիւնը։

Մ. Պապիկեանց

Մի քա և շրջաններից և առանձնապէս Կ.-ոսից մեզ հասած տեղեկութիւններից պարզվեց, որ մեր կազմակերպութեան օգտակար բոլոր իր բոլոր միջոցներով աշխատում է մոր հասցէին անհիմն մեղադրանքներ բարդել, իբր թէ ինքնագլուխ բիւրօ ենք հրատարակել մեզ, և իբր թէ կեղծ կենք յարմարեցնելով փողը ենք կարդում և այլն։

Ի գիտութիւն հասարակութեան յայտնում ենք, որ այդ բոլորը ունի միայն մի նպատակ. այն է, որ այդպիսով պատճառ ունենան մեր գործունէութեան յանցաւոր կերպարանք տալով մեզ պատժելու հնարաւորութիւն ունենան։

Թշամիներս ժողովուրդ. ահա քեզ յեղափոխականներ գէշերս, ահա քեզ գաղափարական մարդուկներ՝ տեսէք և հիացէք. դէմքերը, որոնց ձեռքին է մեր ամբողջ ժողովրդի բարին ու ճակատագիրը, որ գաղափարական այս կռուի օրերում փոխանակ օրէնսական ճանապարհների՝ փառաձգներով է առաջնորդվում։

«Մշակում տպված մեր յօդուածներից հասարակութիւնը շատ լաւ հասկանում է թէ ինչ է մեր կուսի նպատակը. մենք իր ժամանակին շատ լաւ գիտակցել ենք մեր ազատամարտեան ծանր պատասխանատուութիւնը. բայց և մեր կուսի ճշմարտութիւնը. մեր ամէն ժամ գտնվում ենք կրկին ազատութիւնների տակ, այդ բոլորը ինչու. հասար. նրա համար որ ինքնազլուխ բիւրօ հրատարակենք մեզ. այդ թող դատէ ինքը ժողովուրդը։ Մենք առաջարկել ենք արդար պահանջներ. երբ այդ պահանջները անհետևանք են մնացել, անշուշտ մենք դատարկ բոլոր ոգեորները չը պիտի լինենք մինչև վերջը, այլ պէտք է կազմակերպենք ժողովուրդը և քաջաքված խմբերը, մինչև ընդհանուր ժողովը. և անշուշտ այդ կազմակերպութիւնը պիտի ունենայ իր ժամանակաւոր կոմիտէն էլ, բիւրօն էլ և կնիքն էլ, որպէս զի ընդհանուր ժողովին ներկայացվի ժողովրդի իսկական ձայնը։ Ահա այն մեղադրանքները, որ մեր հակառակորդները կերպարանափոխում և անամօթաբար տարածում են։

Խմբագիր Մ.-ոն

Շուշի, 18 սեպտեմբերի

«Մշակ»-ի անցեալ համարներից մէկում Շուշում բացվելիք որբանոց-զգլոցի մասին լոյս տեսած յայտարարութիւնը արձագանք չը գտաւ մեր մամկավարժ ուսուցչուհիների մէջ, իբրև, այն հասարակ պատճառով, որ յայտարարութեան մէջ յայտնված չէին պայմանները։

Զը նայած, որ որբանոցի բոլոր պարագաները պատրաստ են, վերատեսչուհու բացակայութեան շնորհիւ առայժմ ստիպված ենք ձգձգել նրա բացումը։ Այս հանգամանքը ստիպում է ինձ աւելացնել եղած յայտարարութեանը հետևեալը։

Շուշու որբանոց-զգլոցի համար կարգադիր յանձնաժողովը որոնում է մի վերատեսչուհի տարեկան ութ հարիւր ր. ռոճիկով բնակարանը, վառելիքը և ծառան տրվում են ձրի։ Դիմել հետևեալ հասցէով. Шуша. Ек. Баратурѳвой, կարգադիր յանձնաժողովի անդամներին։

Ե. Բ.

Թիֆլիս, 27 սեպտեմբերի

«Մշակ»-ի 206 րդ համարում, յարդելի խմբագրութիւնդ արդէն պարզից, որ «Մշակի» № 173-ում իմ դէմ Անեից գրված նամակը մի սուր կեղծիք է. այժմ ի գիտութիւն յարգելի ընթերցողներին յայտնում եմ, որ այդ սուր կեղծիքը կատարված է Թէոդոսիայի նախկին ծխատեր Ներսէս քահ. Հերթեկեանի ձեռքով, որի մի շաբաթ զեղծումների քննութիւնը անցեալ մայիս ամսին Թէոդոսիայում եղել է իմ ձեռքով համաձայն Վեհափառ Հայրապետի և սինոդի կարգադրութեան։

Զը կամենալով իմ մտ ունեցած իրական փաստերով (вещественное доказательство) դիմել դատական և ծանր պատասխանատուութեան կանչել յիշեալ քահանային՝ բաւականանում եմ այդ սուր վարմունքի դառը յանձնել հասարակական ամենաարգար դատաստանին և իմ կողմից այս անախորժ խնդիրը փակված համարել։ Իսկ ինչ վերաբերում է, որ Հերթեկեան քահ. ոչ միայն մամուլը դարձրեց իր անձնական սուր կրքերի ասպարէզ և զրոյթը, այլ և հինգ գոյութիւն չունեցող ուսանողների անունով էր կազմել իր կեղծ նամակը, շահագործելով նաև ուսանողութեան բարի անունը, այդ մասին էլ թող ինքն ուսանողութիւնը նրան պատասխանատուութեան կոչի։

Բարգէն վարդապետ

Թիֆլիս, 27 սեպտեմբերի.

Կարդացի «Մշակի» № 207 ում Մեծ-Ախպէր նամակը։

Ահա իմ վերջին խօսքը։ Պ. Մեծ-Ախպէր, ձերը զաղափարական բանակռիւ չէ։ Դուք հայհոյում էք միայն աջ ու ձախ։ Եւ որովհետև նոյն կեղծ անուան տակ, նոյն քոթոթի դերումն էք, մենք այլևս չենք արժանացնի ձ

Երկկ Թիֆլիս ժամանեց պօստ հեռագրական գրասենեակի նոր կառավարիչ պ. Զիմիկ։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Դերասան Յովհաննիսեանը քաղաքումս է և մինչև այսօր տեղական սիրողների և իր կնոջ մասնակցութեամբ տուել է երեք ներկայացում։ Խաղացել է՝ «Ոճրագործի ընտանիքը», «Լուիզա կամ կանանց պատերազմ» և յետոյ ամսվա 21-ին էլ խաղաց Շիլլերի «Աւազակները»։ Ներկայացումները ընդհանրապէս յաջող են անցնում։

—

Զէվադի գաւառից մեզ հաղորդում են, որ Զէվադի գաւառի ոստիկանական պահակների աւագ ուրեադիկ Եղբինդարովը մօտ օրերս իր պահակախմբով շրջագայելիս, տեղեկութիւն է ստացել, որ 10 հոգի հեծեալ զինված աւազակներ, «Մադաֆ-Խարաբասի» կոչված եղեգնուտում կողոպտել են Բոլղուր-Բենդի սայլապաններին ու տարել նրանց ձիաները։ Դէպքի տեղը գալով Եղբինդարովը գտել է եղեգնուտների մէջ մի քանի սայլեր առանց տէրերի և անասունների. իսկ անցնելով կողոպտման տեղից մի 9—10 վերստ հեռու, գտնում է և սայլապաններին ձեռքերը կապկըպված. վերջիններս ցուցմունքով Եղբինդարովը կարողանում է հանել չաթանգործներին «Հաջի-Բաբախան» կոչված տեղում, որոնք հեռուից նկատելով մօտեցող պահակներին, թողնում են յափշտակած ձիաները, փախչում դէպի «Հաջի-զենդալի» և ամրանում են քարտեղերում։ Այդտեղ պահակների և չաթագործների միջև սկսվում է հրացանաձգութիւն, որը տեւում է մինչև մութը պատճառ։ Որովհետև աւազակները յարմար դիրքեր էին գրաւել և զինված էին եռակի հրացաններով, ուրեադիկ Եղբինդարովը անկարող էր դուրս մղել աւազակներին իրանց դիրքից, ուր նրանք նստած էին։ Այդ պատճառով երեկոյեան, մութը պատելուց յետոյ, աւազակները օգուտ են քաղում ու փախչում Պասկասան։ Ցրված ձիաները վերադարձրված են իրանց տէրերին։

—

Բագուում, սեպտեմբերի 25-ին հասարակական ժողովարանի շինութեան մէջ կայացել են ձայնաւորների ընտրութիւնները—նոր քառամեակի համար։ Վաղ առաւօտից արդէն թերթիկները ընդունվել են։ Մինչև ժամը 10-ը այդպիսի թերթիկներ ստացվել են 234 հատ։ Ընդունելութիւնը շարունակվել է և ենթադրում են, որ թերթիկների թիւը 3000-ի կը հասնի։ Վերջում պարզվել է, որ ընտրութիւնները տուել են այսպիսի հեռանկը.—ընտրվել են ընդամենը 68 ձայնաւոր, որոնցից 59 թուրք, 3 ռուս (բինկենդորֆ, Կանանով, Մակսիմով), 1 կաթոլիկ (Ֆէյգլ) և 5 հայ (Այվազեան Ա., Օ. Անտոնեան Խ., Ալիբէգեան Մ. և Զուրաբեան Պետրոս)։ («Баку»)։

—

Բարձր ադմինիստրացիայի կարգադրութեամբ ոստիկանութիւնը արտակարգ միջոցներ է ձեռք առել Պետերբուրգի զանազան քաղամասերում հիւպատոսական ընակարանների պահպանութեան համար։

—

Հրամայված է արտակարգ միջոցներ ձեռք առնել նոր ակոչների զինուորական ցուցակները պահպանելու համար. երկիւղ են կրում, որ փորձ կանեն գողանալու այդ ցուցակները, որպէսզի խանգարեն կառավարութեանը նոր զինուորներ հաւաքելու։

—

Բերլինի լրագիրների հաղորդած մանուսոր տեղեկութիւնների համաձայն, Հաագայի խաղաղութեան երկրորդ կոնֆերենցիան 1907 թ. գարնանը չի գումարվելու։ Կոնֆերենցիան, իբրև թէ, յետաձգված է անորոշ ժամանակով, ի նկատ առնելով ներկայ կրիտիկական վիճակը Ռուսաստանում։

—

Սեպտեմբերի 25-ին առաւօտեան ժամը 9-ին Թիֆլիսի մետեխի բանտում երևան է հանած եկեղեցական ընծաների՝ ոսկու և արծաթէ խաչերի և զանձատուփերում եղած դրամների գողութիւնը։ Գողացված իրերի գումարը չի որոշված։ Գողերը մտել են եկեղեցու բակի կողմը գտնվող դռան լողաթը կոտրելով։

—

Կօղակ զօրքերի գլխաւոր վարչութիւնը, Ատրախանի կօղակների գնդի 1-ին մասի եաասուլից մի զեկուցում է ստացել, որ Կոշօվսկի ստանիցայում սեպտեմբերի 10-ի գիշերը գողացել են 82 հրացաններ։

—

Հոկտեմբերի 14-ին կայանալու է Պետերբուրգի ուսումնարանական շրջանի ժողովրդական դպրոցների դիրեկտորների համաժողովը, ընդհանուր ուսում մտցնելու համար խորհրդակցելու։

—

Նոյեմբերին լրանում է Ն. Ի. Պիրոգնեվի 25-ամեակը։ Նրա անունը ռուսական գիտութեան համար զարդ է կազմում։ Նրանով իրաւամբ կարող է պարծենալ ռուս. հասարակութիւնը։ Կասկած չը կայ, ինչպէս որ Մոսկվայի բժշկական՝ այնպէս և մանկավարժական աշխարհը օգուտ կը քաղ է առիթից արժանաւոր կերպով պատուելու նշանաւոր ռուս գիտնականի և հասարակական գործչի յիշատակը։

—

Թիֆլիսի պօստ-հեռագրատան շրջանի կառավարիչը խնդրում է մեզ տպագրել, որ պօստ-հեռագրատան գլխաւոր վարչութեան կառավարչի և Թիֆլիսի նահանգապետի թոյլտուութեամբ յայտարարում է, որ՝ ցնոր կարգադրութիւն—ինչպէս Սգնախի, Թէլաւի, Ցարսկոյսելոյի, Լազոդեխի, Մանգլիսի և Բէլեկիլիսչի պօստ-հեռագրական գրասենեակներում, այնպէս և Վելիցցիսի և Բիսնէթի պօստ-հեռագրական բաժանմունքներում, այնպէս և այդ հատատութիւնները հասցեագրած դրամական և արժէքաւոր բաց ծրարների ընդունելութիւնը դադարեցրած է, որով վերոյիշեալ տեղերը իրեր ուղարկողները կարող են օգտվել բացառապէս դրամափոխադրութեամբ պօստով կամ հեռագրով։

—

Լուր է պտտում, որ Պետական Դումայի անդամ Օնիպկոյի պաշտպան շտաբ-կապիտան Գօպանսկուլոն պատժի է ենթարկվել իր պաշտպանողական ճառի մէջ արտասանած հեռանկալ դարձվածների համար. «Շատերը Պետական Դումայի նախկին անդամի արհանները ծարաւի» («Р. В.»)։

—

Անգլօ ռուսական մերձեցման կոմիտեի որոշումների համաձայն, անգլիական պատգամաւորութեան ընդունելութեան համար Պետերբուրգում կազմված կարգադրիչ մասնաժողովը հրաւէրներ է ուղարկել Ռուսաստանի բոլոր բարձրագոյն դպրոցների պրոֆեսորական խորհուրդներին և աւագներին, հասարակական նշանաւոր գործիչներին մասնակցելու օտարերկրեայ հիւրերի ընդունելութեան հանդիսին։

—

Պարիզից «Бир. Вѣд.»-ը լրագրին հեռագրում են. «Echo de Paris» լրագրում տպագրված է Պ. Ն. Դուրնովոյի Նամակը, որտեղ ներքին գործերի նախկին մինիստրը յայտնում է, որ անցեալ ամառ, Գերմանիայում, Ֆրանսիայում և Շվեյցարիայում եղած ժամանակ, նա ոչ մի տեղ, ոչ մի հիւրանոցում իրան Միլլեր ազգանունով չէ յիշել, այլ ամէն տեղ էլ ապրում էր իր սեփական անունով։ Միևնոյն ժամանակ նախկին մինիստրը, ինչպէս ինքն է ասում, երբէք մտքովն անգամ չէր անցկացրել, որ արտասահմանում որևէ մէկը փորձ կանէ իր կեանքի դէմ։ Ինտերվիւներում նա, դժբաղդ Միլլերի սպանութիւնից 2 շաբաթ առաջ, ապրում էր «Վիկտորիա» հիւրանոցում, «Ինգֆրաու» հիւրանոցին մօտիկ, ուր Էշենտիէվան կատարեց ոճրագործութիւնը։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Մեր երկսեռ ուսումնարանները դեռ չէն բացվել, քանի որ դեռ ուսուցչական մարմինը վերջնականապէս չէ կազմակերպված։ Մանաւանդ աւագ ուսուցչի ընտրութեան հարցը կարծես մի գորդեան հանդոյց է դարձել խեղճ հոգաբարձութեան համար, որը մինչև հիմա անկարող են եղել լուծել։ Ումոր առաջարկում են, սինիսարական պօրուֆէլերների պէս հրաժարվում են, և մինչև այսօր էլ դեռ ոչ ոք չէ ընտրված աւագ ուսուցիչ։ Որքան լսում ենք, դեռ հոկտեմբերի 1-ին էլ հազիւ թէ կարելի լինի մեր ուսումնարանները բանալ»։

—

ԷՋՄԻԱՇԻՆ, Ներսէս վ. Մելիք Թանգեան գրում է մեզ. «Մշակի» նախորդ համարներից մէկում տպած էր իմ ստորագրութեամբ մի հեռագիր կրօնի պարտաւորական լինելու վերաբերմամբ, որ թիւրիմացութեան տեղիք է տուել, որովհետև հեռագիրը տպած էր աղճատված և ոչ լրիւ. «Ցնոր կարգադրութիւն» բառերը վերաբերում էին ոչ «կրօնին», այլ ուսումնարանական «ծրագրի» տպագրութեան և ցրման։ Իսկ 204 համարում իմ Պետերբուրգից ստացած 4000 ռուբլու տեղեկութեան մէջ սպրեել է սխալ. 4000 ռուբլուց 3000 ռուբլի ուղարկել եմ Արմաւիրից ցորն գնելու, մնացել է փոխադրութեան համար 1000 ռ.։ Այն ինչ տպած էր, ուղարկել եմ «300» ռ. և ինձ մօտ մնացել էր իբր թէ «100 ռ.», որ կարող է նոյնպէս թիւրիմացութեան տեղիք տալ։ Խնդրեմ տպէք այս ուղղումը։

—

Ընտրութիւնների ժամանակամիջոցի հարցը լուծվելու է վերջնականապէս մօտ ապագայում։ Այդ առիթով ներկայացրած ենթադրութիւնների համաձայն, առաջարկված է ընտրողական շրջանը սկսել դեկտեմբեր ամսից։ Այս ամսվայ ընթացքում կայանալու է ընտրողների (выборщики) ընտրութիւնը։ Պատգամաւորների ընտրութիւնը նշանակվելու են յունվարին և կը տեւեն մօտ 2 շաբաթ։ Առաջարկված է Դումայի անդամների ընտրութիւնները կատարել զանազան ժամանակներում. ընտրութիւնները ամենից առաջ տեղի են ունենալու կայսրութեան ուելի խաղաղ մասերում։ Բողոքի ժամանակամիջոցը երկշաբթեայ է լինելու. ընտրութիւնները զանազան ժամանակներում նշանակելը հակաճառութեան է հանդիպում. այսպէս օրինակ առարկում են, որ միևնոյն անձնաւորութիւնը կարող է քուէարկվել զանազան ցնկներով։ Բայց այդ առարկութիւնը կառավարչական շրջաններում լուրջ չէ համարվում, որովհետև օրէնքում ուղղակի արգելք դրա համար չէ յիշատակված։

—

«Рижск. Вѣд.»-ն «Латв.» լրագրից քաղելով, հաղորդում է մի անհաւատալի փաստ, որը սակայն մեր տխուր իրականութեան մէջ միանգամայն հաւանական կարող է լինել։ Ցաղդայկենի համայնքում սպանվում է համայնական տանուտէրը։ Պատժողականները, քննութիւն կատարելով, «Էխպոնտերով պատժում են սպանվածի որդուն նրա համար, որ նա լաւ չէ պաշտպանել իր հօրը»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 սեպտեմբերի

ՕՏՏԱՎԱ, 26 սեպտեմբերի։ Բուկինգէմում վայտիսղոցարանի գործարանում բանւորները գործադուլ արին և աշխատեցին խանգարել այն բանւորներին, որոնք չը մասնակցեցին գործադուլին. ոստիկանութիւնը միջամտեց և կրակեց ամբոխի վրա։ Սպանված են 3-ը և վիրաւորված 11 հոգի։ Արտակարգ գնացքով ուղարկված է զօրք պուլէմետներով։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ, 26 սեպտեմբերի։ Դէրնէզանդայից հասած լուրերի համաձայն Շվեցիայում, լոյս կիրակի օրվայ գիշերը, Նօրդենգրում զգացվեցին ստորերկրեայ հարուածներ, որոնց հետևեցին ոստիկ քամի և անձրև։

27 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 սեպտեմբերի։ Մատակարարողական գործի համար սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած զէմստվայի ժողովը վճռեց յատկացնել հետևեալ գումարները։ Սամարայի նահանգի զէմստվային ուղարկաւորին 830,000 ռուբլի, Ուֆայինն նահանգին 365,000, Տամբովի՝ 250,000 ռուբլի, զանազան նահանգներում հասարակական աշխատանքների աշխատանքի օգնութեան հոգաբարձութեան 400,000 ռուբլի։ Բացի սրանից վճռված է տալ նահանգական վարչութիւններին՝ Օրլովի—312,000 և Տամբովին—500000։

ԲՕՐՋՆԱ, 26 սեպտեմբերի։ Պետական Դումայի նախկին պատգամաւոր Լօկոտը, 129-դ յօդուածի մէջ մեղադրվելու պատճառով նահանգապետը արձակից նրան քաղաքային ձայնաւորների կազմից։

ՐԻԳԱ, 26 սեպտեմբերի։ Զորս կողոպտիչներ, մի շարք զինված կողոպտութիւններ կատարելու պատճառով, զինուորական-դաշտային դատարանը դատապարտից մահվան. մէկը արդարացրված է։

ՍՕՖԻԱ, 26 սեպտեմբերի։ Լուրերին նայած, զինուորական մինիստրութիւնը նախագծում է մեծացնել զօրքի թիւը 10 դիվիզիով, խնդրամատոյց է եղած 10 միլիոն այդ նպատակով։

ԼՕՆԴՕՆ, 26 սեպտեմբերի։ Մուրմցկվի համար շնորհաւորական ուղերձ մատուցանող պատգամաւորութիւնը, ուրբաթ ճանապարհ է ընկնում Պետերբուրգ։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 26 սեպտեմբերի։ Գեներալ Դումբաձէն, որ վիրաւորված էր ոտքից, կեանքին վտանգ չէ սպառնում։ Մահափորձի նախընթաց օրը գեներալը նշանակվեց բրիգադի հրամանատար։ Կասկածանքով կալանաւորված են մի քանի հոգի։ Օդինարները և կառապանը վէրքերից մեռան։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՕԴ, 26 սեպտեմբերի։ Նիժեգորոդեան սօցիալ-դեմոկրատական կոմիտէն պատասխանատուութեան է ենթարկված 100 յօդուածի հիման վրա։ Մեղադրվում են 17 հոգի։

ՍՕԼՎԻՉԵԳՕԴՍԿ, 26 սեպտեմբերի։ Գաւառական զէմստվային ինքնավարութիւնը իր կազմի միջից արձակից Պետական Դումայի նախկին պատգամաւորներ Շիպինին և Լօբանովին։

Կ. ՊՕԼԻՍ, 26 սեպտեմբերի։ Դրէվէնայի մօտ գերի է վերցրած յունական մի չէտա, որը բաղկացած էր 17 հոգուց։

ՍԷՂԻՏ, 21 սեպտեմբերի։ Զինուորական-դաշտային դատարանի դատավճռով Գարվօլինում մահվան ենթարկվեց՝ կողոպտիչների պարագլուխը Սէբաստեկին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 սեպտեմբերի։ Զինական կառավարութիւնը յայտնեց Պէկինի ռուսական դեսպանին, որ Սիկինի և Մուկդէնի շրջանը բաց են օտարազգի առևտրի համար։ Ներքին գործերի մինիստրութեան զէմստվային բաժանմունքներին նահանգական պետերին ուղարկված է հրամանագիր, որի մէջ ասված է, որ զէմստվային հիմարկութիւններին տրված գումարները կառուցելու անբերրիութեան դէմ՝ իրաւունք չէ տալիս ադմինիստրացիային աջալուրջ կերպով չը հետևելու ծանը կարիքի ձգտումներին, բացի դրանից առանձին ուշադրութիւն է դարձված այն երևոյթի վրա, որ հակառակավարչական յեղափոխութեան էլեմենտներ չը գտնվեն ժողովրդի կարիքների համար յատկացրված գումարներից օգտվելու ագիտացիայի համար, ժողովրդի մէջ։

ՄԻՆՍԿ, 26 սեպտեմբերի։ Հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան տեղական բաժինը բողոք և արհամարհանք է յայտնել, անգլիական պատգամաւորութեան այցելութեան առիթով, պատճառաբանելով թէ դա մի յանդուգն միջամտութիւն է Ռուսաստանի ներքին կեանքին և ցանկութիւն՝ ճնշել հասարակական կարծիքի վրա, յօգուտ ծայրահեղ կուսակցութիւնների։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԹԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱԿՈՐ ՀԻՄԱՆԴԱՆՈՑ
ԹԱԳԱՎՈՐ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ
Հիմված 1880
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վիներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9 1/2—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԽԵՏԻՄԵԱՆ—11—12 ժ. մարթու, վիներակ. և վիրաբուժ. բն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1 1/2 ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶԵՐԲԻՆԱ—1—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Յ. Գուրզենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկաստ.։
Խ. Գ. ԱԲԵԱՆՑ—7—7 1/2 ժ. ներքին և երեխայոց հ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (գօնսուլիումի) և օգնեցչության համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զաքարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՑԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ. երեկոյեան 6—7 ժ.
ՏԷԼԷՖՕՆ № 1087
Սօլոլակ, Լերմօնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 10—150

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգենովի № 7. պոդեզ նօտար Մգեբրովի։
(ե.հ.շ.) 58—100

ԲԺԻՇԿ
Գ. ՏԻՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, մասնաւորապէս կրծքի։
Թունուքին և բուժումն X ճառագայթներով առաւօտեան ժամը 10—11 և երեկոյեան 5—7։
Բէչնէվսկայա փող. տ. № 7 (Վէցցելի հիւանդոցի մօտ)։ 29—30

ԸՆՏԻՐ ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻ ԳՐՔՈՅԿՆԵՐ

1. «Միրտ» գրքից 9 պատմ.	զերման.	40 կ.
2. Ժամանակը ոսկի	պատկեր.	40 »
3. Քաջ Ադաամ		25 »
4. Սասունցի Ցոճէան	պատմ.	30 »
5. Խալ Խաչիկ	վէպիկներ	25 »
6. Ծովինար		20 »
7. Շէն թաղաւորի աղջիկ		20 »
8. Երկու աղբերացեզ.		30 »
9. Աստուած աղքատի կերպում		20 »
10. Անմեռ աշխարհ		8 »
11. Հէքիաթներ		30 »
12. Աստուած չը ճանաչող	պատկեր.	10 »
13. Գալ Ափո և Խաչան		12 »
14. Երկասիրութիւններ ա. կապուկ		50 »

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին, գումարով ցանկացողները իրան՝ Գամալեանց Մ.-ին Ներսիսեան դպրոց։ 1—20

ԳԻՄՆԱԶԻԱՅԻ 9 ԴԱՍ. ԱԻԱՐՏԱԾ
ՀԱՅ ՕՐԻՈՐԴ
դասեր է տալիս
Բարշչեվսկայա փողոց տուն Գասպարեանի № 4. բնակարան 5.
(հ. շ.) 1—3

Լոյս տեսաւ
ՔՆԿԵՐ
Լ. ԼՈՋԵԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԱԾՔ
Գինը 15 կօպ.
Գումարով ցանկացողներին 50 օր. 20%, 100-ը 25%, 200-ը 30% զիջումով. առանց ճանապարհածախսի։ Կարելի է և վերագիր։
Դիմել՝ Варданц Чиниджянъ фото-цинкографію С. Согомоняна Тифлисъ.
(հ. կ. ե.) 1—5

Ժողովեցէք ամեն տեսակ ոսկրներ և վաճառեցէք
Եկատերինօդարում գտնվող «Կուբանեան սօսինձագործ ընկերութիւն»-ը պատիւ ունի յայտնել ի գիտութիւն ընդհանուրի, որ նա Թիֆլիսում բացել է մի պահեստ՝ գնելու ամեն տեսակի ոսկրներ. կը գնվի անսահմանափակ չափով։ Տեղեկութիւնների համար դիմել Մէրքայէլեան փողոց, Իշխան Վարանցովի արձանի դիմաց. Ցարութիւն Զալալեանի փողը։
(հ. շ. ե.) 1—5

ՄԻ ՇՈՒՇԵՑԻ ԳՐԱԳԻՏ
ԵՐԻՏԱՍԱՐԴ
որնում է մի որևէ համապատասխան պաշտօն։ Հասցէն՝ Панасевича ул. д. № 23.
1—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ԹԱՊԵՈՍԵԱՆ
Վերադառնալով կովկասեան հանքային ջրերից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 10—11., ժ. իսկ երեկոյեան 6—7 ժ.։ Գրիբոյէդովսկայա փողոց, տ. 15, տելէֆոն № 1000.
(ե. հ. կ.) 10—10

ԲԺԻՇԿ
Ա. Մ ի ի բ ա ր ե ա ն ց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վիներական և մարթու հիւանդութիւններին։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։
Սօլոլակ, անկիւն Բէհրութեան և Պասկեվիչի փողոցների,, № 33/15։
(ա. օ.) 17—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վիներական, սիֆիլիսի և կաղտի հիւանդութիւններին։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրոսպեկտի և Կարետնայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կարետնայի փողոցից № 2.
(ա. օ.) 241—300

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Կ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է բերանի և առամների հիւանդութիւն ունեցողներին. պատրաստում է արուեստական առամներ, քիմք, քիթ և անդամահատված ծնօտների պրոթեզներ։
Ընդունելութեան ժամերը 9—2 առաւօտեան և 4—6 երեկոյեան։
Հասցէն՝ Վանքի և Բարօնսկի փողոցների անկիւն № 10։ (ա.օ.) 15—30

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄ
արծաթից ձիված,
որպէս զարդ ժամացոյցի շղթայից կախելու համար։
Գինն է 3 ռուբլի ճանապարհածախսով։
Ապառիկ և վերագիր վճարով
ՉԷ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ։
Դիմել՝ Тифлисъ, Веляминовская 24, В. Варданяну.
(ե. հ. կ.) 5—10

ՆԵՐՍԻՍԵԱՆ
զպրոցի VII դասարանի մի ուսանող, պատրաստում է աշակերտներ տորին դասարանների համար (նպաստաւոր գներով) և ցանկանում է պարապել երկու երեխաների հետ հայերէնից—միայն ճաշ և բնակարան ստանալու պայմանով։
Հասցէն՝ Мухранская ул. № 17, կամ «Մշակի» խմբագրատուն։
Մկրտիչ Յովհաննիսեան
2—3

Առանձին շքեղ, գունատիպ հրատարակութեամբ
Շուտով լոյս կը տեսնեն
ԿԱՐԱՊԵՏ ԱՊԱՓՆԵԱՆԻ
„ՁԻՐԱԿ“
Պատկերազարդ 1907 թ. Պատկերազարդ
ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Հարստացրած ժամանակակից խիստ հետաքրքիր և կարևոր տեղեկութիւններով
Ցանկացողները թող այժմանից դիմեն, որ շուտով կարողանանք ուղարկել.
Դիմել՝ Александрополь, Карапету Апинянъ.
Ալէքսանդրօպոլում չը դիմել ուրիշ ոչ մի հասցէով։ (հ. շ.) 3—5

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ
լոյս են տեսել
կրօնի հետևեալ դասագրքերը.
Աշակերտական բաժին
1) Դասատետր կրօնի՝ ա. տարի 25 կ. 25%
2) » » բ. » 20 կ.
3) » » գ. » 30 կ.
4) Հին-ուխտ . . . 35 կ.
5) Նոր-ուխտ . . . 40 կ.
6) Գործք առաքելոց . . 40 կ.
20% զեղչ
Ուսուցչական բաժին
1) Մեթոդիկայ Հին-ուխտի 1 ր. 75 կ.
2) » Նոր-ուխտի 2 ր. 5 կ.
3) Ուսուցումն քր. կրօնի Դ. 1 ր. 50 կ.
4) » » » Ե. — 50 կ.
5) Տան պատուիրան . — 50 կ.
35% զեղչ
Ցանկացողները կարող են դիմել՝
1) Սահակ քահ. Սահակեանցին, Комерч. училище.
2) «Գուտենբերգ» գրավաճառանոց.
3) Կենտրոնական գրավաճառանոց (центральная).
Ինձ դիմողները ստանում են վերոյիշեալ տոկոսը։
Սահակ քահ. Սահակեանց
(հ. հ. շ.) 5—20

ՑԱՑՏՆՈՒՄ ԵՆՔ
ի գիտութիւն ՄԱՆՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ. որ
„Բօզարչեւանց եւ Որդիք“
Առևտրական Տան ծխախոտի գործարանի թութուն պապիրոսները նրանք կարող են ձեռք բերել սեր
«Թուրցիկ-սայլակից»
(развозка) Բօզարչեանցի յայտարարված գներով, այն է՝ պապիրոսը 10-ը 5 կօպ. «Սիմպատիա» և № 8—1000 հատը 4 ր. 30 կօպ. և 10-ը 3 կօպ., № 7 ու № 16—1000 հատը 2 ռուբ. 60 կօպ.։
Պատուէրները,—ապրանքը իրանց հասցնելու համար, ընդունվում են Ղևոնդ Այդինեանի խանութում, въ желѣзный рядъ.
հ. շ. կ. 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
Առաքել Նալբանդեանի
ԱՌԱԿՆԵՐ
գինն է 50 կ.
Ծախվում են «Կենտրօնական» և տեղերեզ գրավաճառանոցներում։

«Ղափանի Շրվենանց գիւղից Շուշու քաղաքի դպրանոցի աշակերտ Հարությունը գարնանցը բոլորովին չքաւորութեան մատնված լինելով՝ միանգամայն հոգ իր բուռն ցանկութեան՝ թողնում է սումը։ Սրանով ողորմած բարերարներին ուշադրութիւն ենք հրաւիրում և աղաչում։
Հասցէն՝ Шуша Арм. дух. Семинарія V-го к. Айрапету Газарянцу
(ե. հ. կ.) 2—5

Նոր-Բայազետի գիւղական համայնքի ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ
գիւղօրի օգնական։ Պայմանների մասին դիմել՝ Новобаязетъ Агабеку Манукову.
2—3

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ
ցանկանում է հայ ընտանիքում բանտն ունենալ։ Ցանկացողները թող դիմել հետևեալ հասցէով Бебутовская ул. ньевскій тупикъ № 20։
(ե. հ. կ.)

Գանձակում տեղի ունեցած ընդհանուր պատճառով ես տեղափոխեցի իմ կենսարանը ՀԻՐԱՆՈՅՍ շքեղ կահկարասիներով Գուշչինսկի փողոցի վրա № 23, պրոֆեսոր հոգաւոր սեմինարիայի դիմաց
„ՆՕՄԵՐԱ ՅԵՆՏՐ“
մականունով։ Գները 70 կօպեկից մինչև 1 ռուբլի։ Ամսական ցանկացողների հանձին պայմաններով։
Ալէքսանդր Յարութիւնեան
(հ. կ. ե.) 12—

Լոյս տեսաւ և վաճառվում է
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՁԻՐՈՂԵՆԻ
(Ֆենրիկ Ռենեսանս)
„ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՄԵՂԵԴԻՆ“
(Թարգմանական և ինքնուրոյն բանաստեղծութիւնների ժողովածու)
Գինը 30 կօպ. ճանապարհածախսով։ 100-ից աւելի գնողներին 20% զեղչ, գնողին 10%։
Դիմել թարգմանչին՝ Александрополь, Григорису Цитохцяну.

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Ախալցխայի հայոց երկսեռ ուսումնարանի ՕՒՍՈՒՑՉՈՒՀԻ ԲԸ ԿԱԶՄՎԱԾ է։ Խնդրատու ուսուցիչներ պատասխան չը ստացողներին ազատ է։
Նախագահ հոգաբարձութեան՝
Սեդրակ Ագ...
(ե. հ. շ.)

ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ամառային գնացքների երթևեկութիւնը)
(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)

	Պօստային	Մարդատար.	Արագ.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցերեկ	11 ժ. 03 ր. ցերեկ	12 ժ. 20 ր. գիշ. 4 ժ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ. 9 ժ.
Թիֆլիսից դուրս գալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—
Բաքուում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—
Բաքուից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցերեկ	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցերեկ. 10 ժ.
Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցերեկ 11 ժ.
Բաթում հասնելը	1 » 20 ր. ցերեկ	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ. 3 ժ.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	— 11 ժ.
Կարսից » »	3 » 57 » »	—	— 3 ժ.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	— 7 ժ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	— 4 ժ.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12